27 ՓԵՏՐՎԱՐ - 5 ՄԱՐՏ 2026 ՈՒՐԲԱԹ 007(5875)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայ եկեղեցին քննադատում է Սուրբ երկրի կաթոլիկ եւ Հույն ուղղափառ եկեղեցիներին

Սուրբ Ծննդյան տաճարի լիիրավ պահապան Հայ եկեղեցին պահանջում է գործել բացառապես եռակողմ հիմունքներով

Եվրոպայում ամենախոշոր՝ կաթոլիկական լրատվական գործակալությունն (KNA) անդրադարձել է Բեթղեհեմում Սուրբ Ծննդյան տաճարի վերականգնման շուրջ եկեղեցիների վեճին, մասնավորապես Հայոց պատրիարքարանի հնչեցրած ինքնադատությանը, որով մեղադրում է միակողմանիորեն գործելու, հայերին մարginալացնելու մեջ: Հրապարակումը տեղ է գտել նաեւ գերմանական «Դոյչե-դիոյի» փետրվարի 20-ի լրահոսում: Սոնրեւ ներկայացվող վերոնշյալ հոդվածի բովանդակային մասը հուշում է, որ քրիստոնեական մեծագույն սրբություններից մեկում՝ Սուրբ Ծննդյան տաճարի վերանորոգման աշխատանքներում Հայոց եկեղեցու իրավունքների սահմանափակման փորձը մաս է կազմում Հայաստանում եւ աշխարհում Հայոց Եկեղեցու դեմ ծայր առած արշավին: Ճանաչենք մեր պատմությունը, տեր լինենք մեր իրավունքին, կուլ չգնանք խարդավանքին:

⇨3

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Միայն թե ընտրեք մեզ...

Այլեւս պարզ է բոլորիս համար՝ մեկ ձայնը, մեկ քվեն արժի 10 հազար դրամ: Ուժի մեջ է մտնելու ապրիլի 1-ից, շարունակվելու է մինչեւ հունիսի 7: Դրանից հետո, ասում են ՔՊ-ականները, կյանքը կվերադառնա բնականոն հուն՝ կայուն, անվտանգ, խաղաղ, իրակա՛ն Հայաստան: Թոշակառուներն արդեն սովորած կլինեն, թե ինչպես է պետք ծախսել այդ գումարը, մենք կսովորեցնենք: Կարեւորությունն մի՛ տաք, թե ինչ ենք ասել մոտիկ անցյալում, կարեւորը ոչ թե մեր ասածն է, այլ՝ արածը: Չէ՞ որ արագ փոփոխվող աշխարհում ենք ապրում:

Անշուշտ ընացքում դուք, այսինքն քվեարկողներդ, ասում են նիկոլականները, կստանաք նաեւ ալուալվան բոնուսներ, քաջալերական պարգեւավճարներ: Մի՛ խաբվեք իրենք իրենց ֆինանսիստ համարող չարակամ մարդկանց, որոնք ասում են, որ, իբր, թոշակների, նպաստների, վարձավճարների ավելացումից առաջ պետք է առաջին անհրաժեշտության ապրանքների գնաճը զսպող, փողի արժեզրկման առաջքն առնող մեխանիզմներ կիրառել: Մենք դրանք գիտենք, մենք ամեն ինչ գիտենք: Անհանգստանալու կարիք չկա:

Ականջ մի՛ տվեք, ասում են նրանք, մյուս բամբասկոտներին, որոնք խորհրդարանում աթոռ խլելու համար իբր հարց են տալիս, թե մեզ որտեղի՞ց այդ գումարները: Նրանց ասող լինի՝ արա՛, խի՞ եք մտնում մեր ու մեր բարեկամների արանքը: Չլսեցի՞ք փոխնախագահ **Վենսը** ի՞նչ ասաց: Մոռացա՞ք, թե ի՞նչ հայտարարեց **Էրդողանը**, ի՞նչ ասացին **Կալլասը, Ուրսուլան**: Չիմացա՞ք, թե ի՞նչ կանխավճար ուղարկեց Եվրոմիությունը: Չտեսա՞ք, թե սննդարար ինչպիսի՞ցորեն ուղարկեց Իլհամը, քանի՞ վագոն բենզին առաքեց Սոքարը, թե ինչպե՞ս է Նիկոլին պաշտում ադրբեջանցի ժողովուրդը՝ երգով, պարով, թմբուկով:

Մի քիչ համբերություն, հուսադրում են ՔՊ-ականները, եւ դուք կհասկանաք, թե վերջապես իրականություն է դառնում սովետների ժամանակ ամեն օր հնչող երգը՝ «Քարդաշ օլուր Հայաստան վե Ազրբեջան»: Գնալ, գալ, քիրվա դառնալ, աղջիկ առնել, տղա տալ, տուն առնել, տուն ծախել, բիզնես անել, ֆյաբաբանոցներ բացել Սարյան փողոցում, կավե ամաններում փիթի հյուրասիրել այցելուներին, մուղամ հնչեցնել գիշերային Երեւանի կենտրոնական հրապարակում, դեն շպրտել Սախարովի անունը Ազիզբեկովի հրապարակից, շքխշքխ պորտաթար պարել գիշերային ակումբներում, «Արշին մալ ալան» ներկայացնել Պարոնյանի անվան Կոմեդիայի թատրոնում, Azerbaijan Bankasi բացել Շահումյան հրապարակում:

Ի՞նչ կլինի, օրինակ, եթե մեր աղջիկներն ու տղաները սովորեն Բաքվի բուհերում, մասնագիտանան Մանթաշովի, Գյուլբենկյանի, Նոբելի, Մարկոսյանների հիմնած նավթարդյունաբերական ձեռնարկություններում, աշխատեն նավթահորերում: Իսկ ի՞նչ կլինի, եթե, օրինակ, խաչիկ գյուղի գյուղապետը ազերի լինի, Ամասիայի, Մասիսի եւ այլ քաղաքների համայնքապետերը՝ նույնպես:

Ի՞նչ եք կպել Եկեղեցուց, Էջմիածնից, Վեհափառից ու եպիսկոպոսներից: Չէ՞ որ ազերիներն ասում են «Ալլահու աքբար», մենք ասում ենք՝ «Աստված մեծ է»: Նույն Աստվածն է ի վերջո: Ի՞նչ կլինի, եթե մի քանի մզկիթ բացենք Երեւանում, Գյումրիում, առավոտյան ու երեկոյան մինարեթներից մոլլաների երգած ազանի անուշ ձայնը լսենք: Բազմազգ, բազմացեղ, բազմակրոն Հայաստան: Գիտե՞ք որքան զբոսաշրջիկներ կգան այցելելու փոխադարձ հանդուրժողականության տիպար դարձած մեր երկիր: Գիտե՞ք ի՞նչ աշխույժ առեւտուր կլինի:

Մենք չենք մոռացել նույնիսկ Էրգրի ու Կիլիկիայի կարոտով տառապող մեր հայրենակիցներին: Ընտրություններից հետո կբացենք Թուրքիայի հետ մեր սահմանը անխոչընդոտ, ու մերոնք կայցելեն իրենց պապերի ու նախապապերի բնակավայրերը: Վանեցիները կգնան Վանա տարեխ եւ Արտամետի խնձոր ուտելու, մշեցիները՝ ծառերից «քաղցրիկ մանանա» վայելելու:

Ոչ միայն թոշակառուներին ու նպաստընկալներին, այլեւ բոլորին, բոլորին մենք հոգ կտանենք:

Միայն թե ձեր ձայնը տվեք մեզ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Նախկիններ եւ ավելի նախկիններ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեր նախորդ հրապարակումներից մեկում, դասդասելով ընտրազանգվածի շերտերը, մենք խոսել էինք այն մասին, որ ամենասվար՝թոշակառուների ընտրազանգվածն ի զորու է իշխանություն փոխել կամ նշանակել իր քվեով, եթե նրա մեծ մասին կարողանա մոտիվացնել այս կամ այն քաղաքական ուժը: Կես միլիոնից ավելի ընտրող՝ իրոք մեծ ռեսուրս է, եւ մինչ մեր ընդդիմադիր տարբեր շրջանակների մեծահարուստ առաջնորդները մտածում էին նրանց իրենցով անելու մասին, իշխանությունն, ի դեմս **Նիկոլ Փաշինյանի**, ձիու քայլ արեց՝ հայտարարելով, որ ապրիլի մեկից միջինը տասը հազար դրամով թոշակները կբարձրանան: Այսինքն՝ընտրություններից առաջ ապրիլ-մայիս-հունիս ամիսներին կես միլիոնից ավելի ընտրող տասը հազար դրամի շրջանակում այս կամ այն չափով մի փոքր ավելի թոշակ կստանա: Սա, կարելի է ասել, եւ սպասելի, եւ անսպասելի քայլ էր: Սպասելի, որովհետեւ իշխող ուժի բոլոր քայլերն են վերջին շրջանում նախընտրական տրամաբանության մեջ եւ էլեկտրալ նշանակությամբ պայմանավորված: Անսպասելի, որովհետեւ էլի վերջերս, Նիկոլ Փաշինյանը կասկածում էր, թե մեր թոշակառուները կկարողանա՞ն ճիշտ ծախսել տասը հազար դրամանոց «ահռելի» բարձրացումը, դրա համար էլ բարձրացնել չարժե:

Փաշինյանի վերջին հայտարարությունից հետո ընդդիմադիր տարբեր շրջանակներն այդ նախաձեռնությունն անվանեցին ընտրակաշառք ու նաեւ թեմա սատացան վերլուծելու տնտեսական աճի մակարդակը՝ տարբեր մեթոդոլոգիաներով կասկածի տակ դնելով պաշտոնական թվերը, աճի մակարդակը դիտարկելով ՀՆԱ-ում, բյուջեի վրա թոշակների բարձրացման չպլանավորված՝ քառասուն-հիսուն միլիարդանոց տարեկան լրացուցիչ բեռի ֆինանսավորման աղբյուրներ որոնելով եւ առաջ տանելով այն միտքը, թե, միեւնույն է, այդ բարձրացումը թույլ չի տա թոշակները հավասարեցնել նվազագույն կենսապահովման զամբյուղին, ուշացած եւ իրավիճակային քայլ է, եւ այլն:

⇨3

Նոր բացահայտումներ Իրանի ու Ռուսաստանի միջեւ ռազմական համագործակցության մասին

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Իրանի արտգործնախարար **Աբբաս Արաղչին** հույս է հայտնել, որ հինգշաբթի՝ փետրվարի 26-ին, Ժնեւում նախատեսվող հանդիպման ընթացքում հնարավոր կլինի վերջնականացնել երկկողմ համաձայնագրի համապատասխան տեքստը:

Այս հուսադրող հայտարարությանը զուգահեռ հրապարակվել է տեղեկատվություն ԱՄՆ-ի բացահայտման մասին՝ Իրանի եւ Ռուսաստանի միջեւ կնքված գաղտնի պայմանագրի վերաբերյալ: Ըստ այդ տվյալների՝ Թեհրանը Մոսկվայից ձեռք է բերել 589 միլիոն դոլարի գվարդիական սպառազինություն:

Արեւմտյան լրատվամիջոցների հաղորդումները՝ Իրանի շուրջ միաժամանակյա ռազմական եւ դիվանագիտական տեղաշարժերի մասին, կրկին ուշադրության կենտրոնում են պահում ԱՄՆ-ի կողմից Իրանի վրա հնարավոր հարձակման եւ Իրան-ԱՄՆ բանակցությունների անորոշ հեռանկարի թեմաները: Վերլուծաբանների գնահատմամբ, այս զարգացումները կարող են էական ազդեցություն ունենալ լարվածության հետագա ընթացքի վրա:

Ըստ **Financial Times**-ի հաղորդման, որը հիմնվում է գաղտնի փաստաթղթերի եւ մի շարք պաշտոնյաների հայտարարությունների վրա, ռուս-իրանական համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի դեկտեմբերին՝ Մոսկվայում: Դրա շրջանակում Ռուսաստանը պարտավորվում է երեք տարվա ընթացքում Իրանին մատակարարել 500 միավոր դյուրակիր «Վերբա» (Verba) զենիթահրթիռային համալիր եւ 2500 միավոր «9M336» հրթիռ:

Նույն աղբյուրի տվյալներով, Թեհրանը տվյալ համակարգերի ձեռքբերման պաշտոնական դիմումը ներկայացրել է 12-օրյա պատերազմի ավարտից ընդամենը մի քանի օր անց: Այս քայլը վերլուծաբանների կողմից դիտարկվում է ԱՄՆ-ի հնարավոր հարձակման շուրջ առկա մտահոգությունների համատեքստում:

Ավելի վաղ նույն պարբերականը, հրապարակելով արբանյակային լուսանկարներ, տեղեկացրել էր, որ ԱՄՆ-ն ընթացիկ ամսվա ընթացքում զգալի թվով կործանիչներ եւ ռազմական ինքնաթիռներ է տեղակայել Հորդանանի եւ Սաուդյան Արաբիայի ռազմաբազաներում:

Հորդանանի «Մուվաֆք ալ-Սալթի» ռազմաօդային բազայում արձանագրված պատկերների համաձայն, այնտեղ նկատվել է առնվազն 66 կործանիչ, այդ թվում՝ 18 միավոր F-35, 17 միավոր F-15 եւ 8 միավոր A-10: Բազայում առկա են նաեւ EA-18 էլեկտրոնային պատերազմի ինքնաթիռներ եւ մի քանի բեռնատար օդանավեր:

Սաուդյան Արաբիայի «Արքայազն Սուլթան» ռազմաօդային բազայի վերաբերյալ հրապարակված առանձին զեկույցը եւս վկայում է ռազմական ավիացիայի ներկայության աճի մասին: Այստեղ արձանագրվել են E-3 վաղ նախազգուշացման ինքնաթիռներ, ինչպես նաեւ C-130 եւ C-5 բեռնատար օդանավեր:

Ռազմական վերլուծաբանները **Financial Times**-ին հայտնել են, որ նման տեղակայումը վկայում է տարածաշրջանում լայնածավալ օդային գործողություն իրականացնելու համար ամբողջական օպերատիվ կառուցվածքի ձեւավորման մասին: Այս գնահատականը նոր թափ է տվել Իրան-ԱՄՆ հնարավոր պատերազմի սցենարի շուրջ քննարկումներին:

⇨2

Իրան-ԱՄՆ հնարավոր բախման ֆոնին

ՀՀ պաշտպանության նախարարի այցը Թեհրան

Իրանի Իսլամական Հանրապետությունն իր գոյության 47 տարիների ընթացքում, չհաշված Իրաքի հետ ութամյա պատերազմի ծանր հետևանքները, երբեւէ այսքան լուրջ եւ բազմաշերտ մարտահրավերների առաջ չի կանգնել:

ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ հնարավոր ռազմական բախման վտանգը նվազեցնելու նպատակով Թեհրանը շարունակում է միջնորդավորված բանակցությունները Վաշինգտոնի հետ՝ միաժամանակ չբացառելով նաեւ ուժային սցենարի հավանականությունը:

Դիվանագիտական քայլերից զատ, ինչպես նաեւ սպառազինություն մատակարարող երկրների հետ նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների վերանայման ու թարմացման գործընթացին զուգընթաց, պաշտոնական Թեհրանը փորձում է հստակեցնել նաեւ հարեւան երկրների հնարավոր դիրքորոշումները պատերազմի դեպքում:

Այդ համատեքստում փետրվարի 6-ին Իրանի պաշտպանության նախարար **Ազիզ Նասիրզադեն** այցելել է Բաքու՝ պարզելու, թե ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ հնարավոր պատերազմի դեպքում ի՞նչ դիրքորոշում կարող է որդեգրել պաշտոնական Բաքուն: Մեզ հասանելի աղբյուրների փոխանցմամբ՝ Իրանի պաշտպանության նախարարին հաջողվել է ստանալ նախագահ **Իլհամ Ալիեւի** հավաստիացումը, որ Ադրբեջանը պատրաստ է աջակցել լարվածության թուլացմանն ուղղված ջանքերին

Փետրվարի 23-ին իրանական կողմի հրավերով Թեհրան է այցելել ՀՀ պաշտպանության նախարար **Սուրեն Պապիկյանը**: Նա հանդիպումներ է ունեցել իր պաշտոնակից Ազիզ Նասիրզադեի, ԻԻՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր **Աբդոլրահիմ Մուսավիի**, ինչպես նաեւ Իրանի նախագահ **Մասուդ Փեզեշքիանի** հետ:

Իրանական iribnews կայքի հրապարակման համաձայն, նախագահ Փեզեշքիանը Հայաստանի պաշտպանության նախարարի եւ նրան ուղեկցող պատվիրակության հետ հանդիպման ընթացքում վերահաստատել է Իրանի սկզբունքային մոտեցումները տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ եւ ընդգծել հարեւանների, հատկապես Հայաստանի հետ հարաբերությունների ընդլայնման ու խորացման վճռականությունը:

Նա նշել է, որ հարեւանների հետ հարաբերությունների զարգացումը Իրանի արտաքին քաղաքականության հիմնարար առաջնահերթություններից է: Ըստ նրա՝ Հայաստանի հետ համակողմանի կապերի ամրապնդումը վայելում է պետական համակարգի բարձրագույն մակարդակի աջակցությունը, եւ Թեհրանը պատրաստ է զարգացնել երկկողմ համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում:

Անդրադառնալով երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական եւ միջանցքային համագործակցությանը՝ Իրանի նախագահը դրական գնահատել է որպես փոխադարձ ներուժի իրացման համատեղ կամքի արտահայտություն եւ շնորհակալություն հայտնել Հայաստանի կառավարությանը՝ իրանական ընկերությունների գործունեությանը ցուցաբերվող աջակցության համար:

Փեզեշքիանը նաեւ հայտարարել է, որ Իրանը պատրաստ է լրամշակելու Թեհրանի եւ Երեւանի միջեւ «Համապարփակ ռազմավարական գործընկերության փաստաթուղթը»՝ ընդգծելով, որ քաղաքական, տնտեսական, տրանսպորտային, էներգետիկ եւ ենթակառուցվածքային ոլորտներում հարաբերությունների խորացումը կնպաստի երկու երկրների եւ ժողովուրդների շահերի առավել արդյունավետ ապահովմանը:

Ըստ պաշտոնական հաղորդագրության, Իրանի նախագահը վերահաստատել է, որ իր երկրի հաստատուն քաղաքականությունը տարածաշրջանում խաղաղության, կայունության եւ տեւական անվտանգության աջակցությունն է: Թեհրանը մերժում է ապակայունացումն ու լարվածությունը՝ համոզված լինելով, որ յուրաքանչյուր անկայունություն վտանգավոր է տարածաշրջանի բոլոր պետությունների համար:

Նա նաեւ նշել է, որ համագործակցության ընդլայնման հնարավորություններ կան համատեղ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում եւ կոչ արել զարգացնել կառուցողական փոխգործակցություն՝ ապահովելու ժողովուրդների խաղաղ, փոխադարձ հարգանքի եւ համակեցության պայմաններում համատեղ ապրելը:

Փեզեշքիանը անդրադարձել է նաեւ Հայաստան կատարած իր վերջին այցին՝ այն գնահատելով կառուցողական եւ արդյունավետ: Նրա խոսքով, այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները գտնվում են համապատասխան գերատեսչությունների մշտական ուշադրության ներքո:

Իր հերթին, Սուրեն Պապիկյանը շնորհակալություն է հայտնել Իրանի նախագահին ընդունելության համար: Նա բարձր է գնահատել երկու երկրների պաշտպանության նախարարությունների միջեւ վերջին տարիներին ձեւավորված համագործակցությունը՝ ընդգծելով, որ տնտեսական եւ տրանսպորտային ոլորտներում եւս երկկողմ կապերը զարգանում են դրական դինամիկայով, ինչը նպաստում է հարաբերությունների հետագա ամրապնդմանը:

Որոշ տեղեկությունների համաձայն, այցի ընթացքում քննարկվել է նաեւ համատեղ զորավարժությունների անցկացման հնարավորությունը:

Այդուհանդերձ, պաշտոնական հաղորդագրություններում բաց է մնում առանցքային հարցը. եթե Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմական բախում տեղի ունենա, Վաշինգտոնի հետ հարաբերությունները վերջին շրջանում ակտիվացնող Երեւանն ի՞նչ դիրքորոշում կորդեգրի եւ լարվածության նվազեցման ուղղությամբ ի՞նչ գործնական քայլեր կձեռնարկի:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

⇨1 **Իրանի հրթիռային կարողությունները՝ ըստ Fox News-ի**

Ամերիկյան հեռուստալիքն իր զեկույցում անդրադարձել է Իրանի մի շարք բալիստիկ հրթիռների տեխնիկական հնարավորություններին.

«Սեջիլ»՝ մոտ 1242 մղոն հեռահարությամբ, որը, ըստ հաղորդման, կարող է խոցել Մերձավոր Արեւելքում եւ Իսրայելում գտնվող ԱՄՆ ռազմաբազաները:

«Ղիյամ»՝ մոտ 435 մղոն հեռահարությամբ, ունակ է թիրախավորել ԱՄՆ ռազմաբազաները Իրաքում, Թուրքիայի արեւելքում, Քուվեյթում եւ Պարսից ծոցի շրջանում:

«Շահաբ-3»՝ մոտ 745 մղոն հեռահարությամբ, կարող է հասնել Սաուդյան Արաբիայում, Օմանում, Թուրքիայում, Իրաքում եւ Սիրիայում գտնվող թիրախներին:

«Շահաբ-1»՝ 186 մղոն հեռահարությամբ, ընդգրկում է Իրաքի արեւելքում եւ Պարսից ծոցի ավազանում տեղակայված ռազմաբազաները:

Այս տեղեկությունների հրապարակումը ամերիկյան լրատվամիջոցներում, ինչպես նաեւ տարածաշրջանում ռազմական ավիացիայի լայն տեղակայումը, ուժեղացրել են ուղիղ բախման սցենարների շուրջ ենթադրությունները եւ խորացրել քննարկումները երկու կողմերի հնարավոր առճակատման նոր փուլի վերաբերյալ:

Նոր բացահայտումներ Իրանի ու Ռուսաստանի միջեւ ռազմական համագործակցության մասին

Արաղչիի դիրքորոշումը. դիվանագիտությունը մնում է միակ ճանապարհը

CBS News-ին տված հարցազրույցում Աբբաս Արաղչին, անդրադառնալով հարցին, թե արդյոք **Դոնալդ Թրամփը** կարո՞ղ է հարձակվել Իրանի վրա եւ արդյոք ռազմական սպառնալիքը կիրառվում է որպես ճնշման միջոց, նշել է.

«Ես չեմ կարող դատել նրանց մտադրությունների մասին, սակայն եթե ցանկանում են լուծում գտնել Իրանի խաղաղ միջուկային ծրագրի հարցում, միակ ճանապարհը դիվանագիտությունն է»:

Նրա խոսքով՝ Իրանը նախկինում եւս ապացուցել է, որ ընդունում է դիվանագիտական ուղին, եւ փոխշահավետ լուծման հասնելու հնարավորությունը դեռ պահպանվում է: Արաղչին ընդգծել է, որ «ռազմական կուտակումների կարիք չկա, եւ դրանք չեն կարող մեզ ճնշել»:

Նա անդրադարձել է նաեւ միջուկային առաջարկի նախագծին՝ նշելով, որ Թեհրանը շարունակում է աշխատել այնպիսի տեքստի վրա, որը կարացուցի երկու կողմերի մտահոգությունները ու շահերը: Նախարարը հույս է հայտնել, որ ժնեւում նախատեսվող հանդիպման ընթացքում հնարավոր կլինի վերջնականացնել համապատասխան փաստաթուղթը եւ արագ հասնել համաձայնության:

Այս դիրքորոշումը վկայում է, որ լարվածության աճին զուգահեռ Իրան-ԱՄՆ բանակցային ուղին դեռեւս փակված չէ:

Ընդհանուր առմամբ, ռազմական տեղաշարժերի, մեդիա հրապարակումների եւ դիվանագիտական հայտարարությունների համընկնումը ստեղծել է բարդ եւ հակասական իրավիճակ: Միաժամանակ շրջանառվում են երկու հակադիր սցենարներ՝ կա՛մ լարվածության սրում մինչեւ ռազմական բախում եւ կամ բանակցությունների վերականգնում եւ համաձայնության հանգում:

Այս պայմաններում Թեհրանի եւ Վաշինգտոնի հարաբերությունները թեւակոխել են վերջին տարիների ամենազգայուն եւ որոշիչ փուլերից մեկը:

Հայ եկեղեցին քննադատում է Սուրբ Երկրի Կաթոլիկ եւ Հույն ուղղափառ եկեղեցիներին

⇨1 Հայոց պատրիարքարանը մեղադրում է Սուրբ Երկրի կաթոլիկ ֆրանցիսկյան կուստոդիային եւ Երուսաղեմի հույն ուղղափառ պատրիարքարանին միակողմանիորեն գործելու եւ հայերին ճնշելու, լուսանցք մղելու, մարգինալացնելու մեջ: Հունվարի վերջին երկու եկեղեցիները համատեղ հայտարարությամբ ազդարարեցին, որ Ծննդյան եկեղեցու ներսում գտնվող քարանձավը կվերականգնվի: Նշվեց, որ ներգրավված են նաեւ Հայոց պատրիարքարանը եւ Պաղեստինի ինքնավարությունը: Սակայն, ըստ հայկական կողմի, դա տեղի չի ունենում հավասար հիմունքներով: Ծննդյան քարանձավը վաղեմի համաձայնագրով կառավարվում է համատեղ՝ Հույն ուղղափառ եկեղեցու, Հայ առաքելական եկեղեցու եւ Հռոմի կաթոլիկ եկեղեցու մասնակցությամբ: Հիշյալ կարգավորումը երաշխավորում է հավասար իրավունքներ: Այնինչ վերջերս կաթոլիկ եւ ուղղափառ հռչակագրում Հայոց եկեղեցին հիշատակվում է միայն որպես «համագործակցող» գործընկեր, ոչ որպես ստորագրող: Ըստ Հայոց պատրիարքարանի, սա բացթողում չէ, այլ միտումնավոր քաղաքական ուղերձ: Սույնը հաստատում են նաեւ օրեր առաջ Ֆրանցիսկյան կուստոդիայի այցելության վերաբերյալ զեկույցում ներառված լուսանկարները եւ հայտարարությունները, որում հայ ներկայացուցիչները չկային: «Սուրբ վայրում, որտեղ պահպանվում է ստատուս քվոն, չի կարելի խոսել (երեքի) «համաձայնության» մասին եւ

միաժամանակ գործել երկկողմանի», հայտարարել է Հայոց պատրիարքարանը: Հայերին տեքստերում հիշատակելը, իսկ գործնականում նրանց բացառելն անընդունելի է: Երկարաժամկետ հեռանկարում կրկնակի բացառումը կարող է խաթարել հայերի իրավունքներն այս վայրում: Հետեւաբար, Հայ եկեղեցին պահանջում է՝ ապագայում հաղորդակցությունները, այցելությունները եւ ստուգումներն իրականացնել բացառապես եռակողմ հիմունքներով եւ՝ հայերը ներկայացվեն՝ որպես Ծննդյան քարանձավի լիիրավ պահապաններ:

KNA-ի վերոհիշյալ հոդվածից հետո, փետրվարի 25-ին, Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան քարայր է այցելել «տաճարի իրաւատէր Հայոց Սրբոց Յակոբեանց Ջինուորեալ միաբանութիւնը, գլխաւորութեամբ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր», ինչպես ծանուցում է համաեվրոպական «Օրեր»ի կայքը՝ «մօտէն հետեւելու վերականգնման աշխատանքներու ընթացքին»:

Բեթղեհեմի կենտրոնում գտնվող սուրբ Ծննդյան տաճարը, որը 2012 թվականի հունիսին ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում, քրիստոնեական աշխարհի ամենասուրբ վայրերից մեկն է: Այն լայնածավալ վերականգնման է ենթարկվել 2013 թվականից ի վեր: Նախատեսված է մինչեւ 2026 թվականի օգոստոս ավարտել վերականգնումը: Ծննդյան եկեղեցին 12,000 քառակուսի մետր տարածք զբաղեցնող վանքերի, քարանձավների եւ այլ եկեղեցիների համալիրի մաս է կազմում:

Նախկիններ եւ ավելի նախկիններ

⇨1 Նրանք պնդում են, որ ընտրություններից երեք ամիս առաջ բարձրացված թոշակը ոչ թե բարեփոխում է, այլ քաղաքական հաշվարկ, իսկ թոշակների աստիճանական-մշտական բարձրացումը պետք է սոցիալական քաղաքականության մշտական, եւ ոչ իրավիճակային բաղադրիչ լինի, կամ քաղաքական դիվիդենտ ստանալու ակցիա: Ուրիշները, նախկին ոլորտային պաշտոնյաներ, խոսում են ՀՆԱ-ի հիսուն տոկոսը կազմող արտաքին պարտքից եւ ամսական կտրվածքով հինգ միլիարդ դրամով ավելի բյուջեի նոր ծանրաբեռնվածությունից, որի պատճառով արդեն մոտակա ժամանակում հարկ կլինի խոստովանել սխալ հաշվարկի մասին, միգուցե բյուջեն վերանայելու անհրաժեշտություն լինի:

Սամվել Կարապետյանի ներկայացուցիչն ու «Հայաքվեն», քննադատելով թոշակների բարձացումը որպես ընտրողի տրամադրության վրա ազդելու քայլ, համարում են, որ դա իրականություն է դարձել իրենց պայքարի հետեւանքով:

Որ կատարվածը նախընտրական տրամաբանության մեջ է՝ անգամ դպրոցական երեխան կնկատի, քանի որ մեր իշխանավորները բյուջե հավաքագրելու համար այնքան նոր հարկատեսակներ են հորինել հընթացս,այնքան նոր վճարների պատուհան են բացել նույն թոշակառուների համար տարբեր առիթներով, իսկ թոշակների բարձրացման վերաբերյալ էլ ոլորտային պաշտոնյաները բազմիցս պատասխանել են, որ դա հնարավոր չէ, ու այս տարվա բյուջեով նախատեսված չէ, որ բոլորն են դա դիտարկում ընտրական ժամանակի տրամաբանության մեջ:

Չեմ զարմանա, որ առաջիկայում տրանսպորտի գինն իշխանությունը հետողորմյա անի հարյուր դրամի սահմանգիծ՝ դե մի երեք ամսով, կանգնեցնի երկրաչափական պրոգրեսիայով աճած գույքահարկի բարձր վճարները՝ մինչեւ նոր օրենսդրական նախաձեռնություն, աղբահանության հաշվարկման կարգը վերանայի եւ այլ զարմանահրաշ քայլեր անի (հուշում ենք, ասում են՝ մեր գրածները տեղ են հասնում):

Չնայած հունիսի յոթից հետո ընտրված իշխանությունը, ով էլ նա լինի, հավանաբար կանգնելու է այս որոշումները վերանայելու խնդրի առաջ՝ կա՛մ բյուջեի սեկվեստրով, կա՛մ մեր պաշտոնյաներին այլեւս պարգեւատրումների աստղաբաշխական գումարները չվճարելով-հին ստացածներն էլ հետ ուզելով, կա՛մ այս պահելի վճարումներն անելու համար նոր պարտքեր կուտակելով:

Ի՞նչ է ստացվում՝ փետրվարի վեցից ընտրության մասնակից ուժերին առնչվող հիմնադրամների բարեգործությունն արգելող (դրա համար քրեական պատասխանատվություն է նախատեսված) իշխանությանը ոչ ոք չի կարող արգելել, որ այն, ինչ չեն արել հինգ տարում, այս քանի ամսում անեն՝ վերընտրվելու ռեսուրսն ապահովելով:

Ընտրությունների օրը նշանակված է, առաջադրումների ամսաթիվը հայտնի է, ու թեեւ այս՝ թոշակների բարձրացման թեման ԱԺ առաջիկա քառօրյայում դեռ մի լավ շուռումուռ կտրվի, բայց մենք այսքանով բավարարվենք ու մի երկու խոսք ասենք ներկա նախընտրական դասավորությունների մասին:

Երբ **Ռուբեն Ռուբինյանին** հարցրինք այն մասին, թե ո՞ւմ հետ է համագործակցելու իշխանական ուժը առաջիկա ընտրություններին, քանի որ ՔՊ-ի վարկանիշն էլ այնքան բարձր չէ, որ միայնակ մեծամասնություն վերցնի, նա ագրեսիվ կերպով պնդեց մեր սխալականությունը՝ նշելով, որ ՔՊ-ն գնում է սահմանադրական մեծամասնություն կազմելու, ու ոչ մի օլիգարխ՝ իր հարակից քաղաքական ուժերով այլեւս խորհրդարան չի մտնի: Դե մի բան գիտի, որ այդքան ինքնավստահ է, բայց ո՞վ գիտե: Գործարարներն, իրոք, օրենսդիրում չպիտի լինեն, թեեւ հիմա էլ կան:

Բայց այլ՝ նոր ուժեր չկան, ՔՊ-ն եւ ընդդիմադիր դաշտը անցած տարիների ձեռք-ձեռքի իրագործել են այն սցենարը, որ ոչ մեկին՝ ոչ իշխանությանը, ոչ ընդդիմությանն այլընտրանք չառաջանա, Սամվել Կարապետյանի շուրջ քաղաքական համախմբումը ժանրի կանոններով է, իսկ մեկ-երկու նոր անուններն ու նրանց գեներացրած քաղաքական միավորները փաստորեն եղածների սատելիտներն են:

Այժմ ուրվագծվում է, որ ընտրություններին մասնակցելու մտադրությունը խոշոր դաշինքներով ընդդիմությունն ուզում է իրացնել **Ռոբերտ Քոչարյանի, Սամվել Կարապետյանի** եւ **Գագիկ Ծառուկյանի** շուրջ համախմբվելիք ուժերով, որոնք ի վերջո կարող են պայմանավորվել խորհրդարան անցնելուց հետո կոալիցիա կազմելու մասին, որի հեռանկարն անշուշտ անհանգստացնում է իշխանությանը, երբ նրա ներկայացուցիչներն ասում են, թե այլեւս ոչ մի օլիգարխ չպետք է հայտնվի խորհրդարանում:

Տեսականորեն, իհարկե, հնարավոր է այդպիսի կոալիցիայի հիսունմեկ տոկոսանոց մեծամասնություն:Չնայած դեռ հայտնի չէ, թե մի շարք կուսակցություններ եւ անձեր մտադրվա՞ծ են մասնակցել ընտրություններին, թե՞ ոչ, կամ միայնակ, թե՞ դաշինքով են մասնակցելու: Օրինակ՝ ՀՅԴ-ի պարագայում դա հայտնի կդառնա մարտի երկրորդ կեսին: Եթե ընդդիմադիր մի շարք՝ համեմատաբար փոքր ուժեր ընտրություններին միայնակ մասնակցեն, ապա դա ձայների փոշիացման է բերելու եւ ընդդիմադիրների՝ մեր ասած տեսականորեն հնարավոր մեծամասնությունը հնարավոր չի լինի ի սկզբանե:

Բացի այդ՝ ընդդիմությունն իր ներսում այնքան հակասություն ունի, որ երբեք հնարավոր չէ բացառել, որ արդեն խորհրդարանում այս կամ այն ուժին ոչ սիրելի դոմինանտությունը ընդդիմադիր որեւէ միավոր կարող է փլուզել իշխանության հետ համագործակցելով:

Մյուս կողմից՝ ձայների փոշիացումը չի կարելի բացառել, որն իշխանությանն է ձեռնտու, անգամ այն իրագործելու համար է իշխանությունը գուցե խոսում առանց համագործակցության ընտրություններին մասնակցելուց, քանի որ իշխանամերձ մի քանի կուսակցություններ կան, որոնք միայնակ մասնակցելով՝ անշուշտ քվեներ կտանեն հենց ընդդիմությունից:

Իսկ ընդհանրապես՝ ստացվում է, որ ընտրություններից առաջ կունենանք այսպիսի պատկեր, երբ ընտրություններին մասնակցելու են միայն նախկինները, այդ թվում՝ ութ տարի կառավարելուց հետո նախկին կդառնա նաեւ ներկա իշխանությունը: Եւ բոլոր առկա նախկիններին ոչ մի այլընտրանք չի լինի, քանի որ մեծ հաշվով այդպիսի այլընտրանք այդպես էլ չստեղծվեց: Ներկա իշխանությունը, եթե իրոք մտածում էր երկրի մասին, իրեն անցումային իշխանություն դիտելով այդպիսի այլընտրանք հենց ինքը պետք է ստեղծեր՝ ութ տարվա մեջ մեկիկ-մեկիկ պեղելով բոլոր հեռանկարային անձերին՝ մասնագետների եւ պրոֆեսիոնալների, պատրաստելով նրանց հաջորդ, ավելի պրոֆեսիոնալ կառավարության համար: Մինչդեռ իշխանությունը կուսակցապետություն է կառուցել, խորացել կուսակցական հավատարմություն ապացուցած նորօրյա «պոլիփեստերի» սեփական հարթությունում, չդիտարկելով, որ ապակուսակցական ներուժ իրոք Հայաստանում կա:

Այլընտրանք մեծ հաշվով չի լինելու, մրցակցությունը նախկինների եւ ավելի նախկինների միջեւ է, իսկ այլընտրանք չունեցող ազգերը լավագույն ապագա ունենալու հույսեր չպետք է փայփայեն:

Էլ չասած, որ տարածաշրջանին ներկայացվող պահանջները (Իրանի շուրջ) դեռ առկա են, իսկ դրանց առարկայացումը կարող է ընդհանրապես խառնել մեր քաղաքական դասի բոլոր հաշվարկները:

Սյուզան Ազեմյան.
Ստեղծագործության լուռ ուժը

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ԼՈՆԴՈՆ - Սյուզան Ազեմյանը բազմաձյուղ տեսողական արվեստագետ է, որի կյանքն ու ստեղծագործությունը կոփվել են պատերազմի, տեղահանության եւ մանկուց ունեցած հաշմանդամության փորձառության բովում: Ծնված լինելով Բեյրութում եւ մեծանալով Լիբանանի քաղաքացիական պատերազմի բռնությունների միջավայրում՝ նա արվեստը բացահայտել է ոչ թե որպես զբաղմունք, այլ որպես փրկօղակ, մի ոլորտ, որտեղ գույնը, գիծը եւ երեւակայությունը կարող են գոյատեւել նույնիսկ շրջակա աշխարհի փլուզման պայմաններում:

Սյուզանն ուսանել է Լիբանանի Կերպարվեստի ակադեմիայում: 1990-ականների սկզբին տեղափոխվել է Միացյալ Թագավորություն, որտեղ մասնագիտացել է գեղանկարչության մեջ եւ հեղինակավոր կրթաթոշակով դարձել «Դելֆինա Ստուդիո թրաստ» կեցավայրի արվեստագետ:

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Բեյրութում, Լոնդոնում եւ Հոնկոնգում, մասնակցել բազմաթիվ ցուցահանդեսների Եվրոպայում, Ասիայում, Մերձավոր Արեւելքում եւ ԱՄՆ-ում: 1999 թվականին Անգլիայի Արվեստի խորհրդի աջակցությամբ ներկայացրել է Միացյալ Թագավորությունը Լոս Անջելեսում կայացած «Շատ հատուկ» (Very special) արվեստի փառատոնում: Նրա գործերն այսօր պահվում են հանրային եւ մասնավոր հավաքածուներում՝ Լիբանանում, Անգլիայում, Հոնկոնգում, Թայվանում եւ ԱՄՆ-ում: Սյուզան Ազեմյանը նաեւ անգլերեն բանաստեղծություններ է գրում, որոնցից մի քանիսը ներառված են առցանց «The Hangout» էլեկտրոնային գրքում:

- Սիրելի՛ Սյուզան, դուք արվեստը բնութագրել եք որպես ապաստան եւ լեզու դեռ վաղ տարիքից: Ինչպե՞ս են պատերազմի, տեղահանության եւ հաշմանդամության ձեր մանկության փորձառությունները ձեւավորել ձեր ստեղծագործական առաջին քայլերը:

- Իմ մանկությունն անցավ պատերազմի սվերի, ֆսորի եւ հիվանդության պատճառով ընդմիշտ փոխված մարմնի պայմաններում, եւ այդուհանդերձ արվեստը դարձավ միակ տարածքը, որին չէր դիպչում կործանումը: Մի աշխարհում, որն անդադար փախչում էր ոտքերիս տակից, նկարչությունը դարձավ անշարժ կետ, փոքրիկ մեջ գտնվող լուռ սենյակ: Այն ինձ հնարավորություն տվեց խոսել, երբ բառերը լռում էին, կառուցել մի տիեզերք, որտեղ կարող էի ազատ գոյություն ունենալ: Ստեղծագործությունը դարձավ իմ ապաստանը, իմ դիմադրությունը եւ գոյատեւման առաջին գիտակցված քայլը:

- Լոնդոնում «Դելֆինա ստուդիո թրաստ»-ում անցկացրած ժամանակը ձեզ ներառեց միջազգային արվեստագիտական միջավայրում: Ինչպե՞ս ազդեց այդ ժամանակահատվածը ինքնության, ընկալման եւ մարդկային փորձառությունը ձեւավորող իրողությունների ձեր ուսումնասիրության վրա:

- «Դելֆինան» իմ առջեւ բացեց աշխարհը՝ լայն բացված պատուհանի պես: Շրջապատված մոլորակի տարբեր անկյուններից եկած արվեստագետներով՝ ես սկսեցի հասկանալ ինքնությունը որպես մի հոսուն, բազմաշերտ եւ մշտապես վերածնվող երեւույթ: Լոնդոնի մշակութային խտությունը սրեց իմ զգայությունը՝ հասկանալու, թե ինչպես է ձեւավորվում ընկալումը՝ պատմությամբ, հիշողությամբ եւ այն անտեսանելի կառուցվածքներով, որոնք ժառանգում ենք: Այդ տարիներն ինձ տվեցին համարձակություն՝ հարցականի տակ դնելու ամեն ինչ, անգամ տեսնելու գործողությունը:

- Ձեր մասին ես առաջին անգամ իմացա սիրիահայ գրող, հանգուցյալ Թորոս Թորանյանի ուղեգրությունից, երբ աշխատում էի Չինաստանի հայերի մասին գրքիս վրա: Ավելի քան երկու տասնամյակ դուք ապրել եւ ստեղծագործել եք Հոնկոնգում: Ի՞նչ տվեց այդ փորձառությունը ձեզ՝ թե՛ որպես արվեստագետի, թե՛ որպես մարդու:

-Հոնկոնգը լույսի եւ խտության քաղաք էր՝ մի վայր, որտեղ շարժումը երբեք չէր դադարում, եւ հակադրությունները գտնվում էին համակեցության մեջ: Նրա ռիթմը ներծծվեց իմ աշխատանքի մեջ՝ սովորեցնելով գեղեցկություն գտնել բեկվածության մեջ եւ ներդաշնակություն՝ հակասությունների ներսում: Սակայն այդ փայլի ներքո ես ունեցա մի երկարատեւ, լռեցնող ամուսնություն, որը փորձում էր ջնջել իմ ձայնն ու իմ արվեստը: Դրանից փրկվելն ինձ սովորեցրեց, որ ստեղծագործությունը փխրուն չէ. այն սպասում է, դիմանում է եւ վեր է բարձրանում, երբ հոգին պատրաստ է:

- Այժմ դուք վերակառուցում եք ձեր ստեղծագործական կյանքը «Իմ նոր եսը» նախագծի միջոցով: Ի՞նչ է խորհրդանշում այն եւ ինչպե՞ս է արտացոլում ձեր ներկա ստեղծագործական տեսլականը:

- «Իմ նոր եսը» վերադարձ է դեպի իմ ներաշխարհը, մի տարածք՝ որը կորցրել էի եւ այժմ կրկին ձեռք եմ բերել: Իմ աշխատանքն այլեւս չի սկսվում արտաքին աշխարհից. այն սկիզբ է առնում հիշողությունից, ներքմբռնումից եւ ինքնության սրբազան ճարտարապետությունից: Յուրաքանչյուր ստեղծագործություն բուժման ծես է, ընդհատված կյանքի կտորները նորից իրար միացնելու փորձ: Այս նախագիծն իմ վերածնունդն է՝ անցում լռությունից ներկայության, գոյատեւումից՝ լիարժեք գոյության ճանապարհ:

- Տարբեր երկրներում ապրելով՝ կապ ունե՞ս հայ արվեստագիտական համայնքի հետ:

- Ես նաեւ Հայաստանի քաղաքացի եմ եւ հայկական ստեղծագործական ոգու հետ իմ կապը արմատացած է իմ էության մեջ: Այն ապրում է ժառանգած դիմադրողականության, սերունդներով փոխանցված պատմություններ-ի, մոխիրներից վերակառուցվելու բնազդի մեջ: Նույնիսկ հայ շրջանակներից հեռու լինելով՝ ես զգում եմ համընդհանուր հիշողության եւ ստեղծագործական եռանդի տրոփյունը: Երբ հանդիպում եմ հայ արվեստագետների, դա ավելի շատ ճանաչում է, քան ծանոթություն:

Այո՛, ես ունեմ Հայաստանի քաղաքացիություն, սակայն դեռ չեմ կարողացել այցելել Հայաստան: Պատանեկության տարիներին պատկերացնում էի, թե ինչպես եմ այնտեղ սովորում եւ ապրում՝ քայլում նույն ճանապարհներով, որոնցով քայլել են իմ նախնիները, օդում լսում եմ իմ լեզուն, զգում եմ այն լուռ ճանաչումը, որը միայն հայրենիքն է տալիս: Բայց իմ հաշմանդամության պատճառով ճանապարհորդությունը երբեք հեշտ չի եղել: Այն ճանապարհը, որին տենչում էի, միշտ մի փոքր անհասանելի մնաց՝ մի վայր, որը կարող էի տեսնել ուրուագծերով, բայց ոչ դիպչել ձեռքերով: Այնուամենայնիվ, հենց այդ կարոտն էլ դարձավ ուղեկից՝ ներքին մի Հայաստան, որն ամբողջ կյանքում կրում եմ իմ մեջ:

- Իմ հաջորդ հարցը ավանդական է. ի՞նչ կարող եք պատմել ձեր նախնիների մասին:

- Հայրս՝ **Անտուան Ազեմյանը**, ծնվել է Անթաֆիայում (Անտիոք), որը Հայոց ցեղասպանության ժամանակ կարեւոր անցակետ էր: Վաղ տարիքից կորցնելով հորը՝ նա պատասխանատվություն է ստանձնել իր երկու կրտսեր եղբայրների եւ տարեց մոր հանդեպ: Տասնվեց տարեկանում մեկնել է Սիրիա, սովորել ֆրանսիական ռազմական դպրոցում, տիրապետել յոթ լեզվի եւ ծառայել Ֆրանսիական օտարերկրյա լեգեոնում որպես թարգմանիչ՝ վերահսկելով միջազգային հեռարձակումները՝ գաղտնագրված նացիստական հաղորդագրություններ հայտնաբերելու նպատակով:

Երբ հայ փախստականները տեղափոխվել են Լիբանան, հայրս օգնել է նրանց վերականգնել ինքնության փաստաթղթերը: Հետագայում հրաժարվել է Մադագասկարում թարգմանչական պաշտոնից՝ մնալու համար հիվանդ մոր կողքին, հեռացել է ֆրանսիական բանակից եւ Բուրջ Համուդում աշխատել է որպես բազմալեզու ոստիկան:

Մայրս՝ **Եղիսաբեթ Ճաղարյանը**, Լիբանան է հասել մանկության տարիներին, երբ իր ընտանիքը ցեղասպանության ժամանակ փախել էր Բելենից (Բեյլան)՝ Իսքենդերունի մոտակայքից: Նա ամուսնացել է հորս հետ, թեեւ իր երազանքը՝ դառնալ օպերային երգչուհի, չեն քաջալերել: Միասին նրանք մեծացրել են երեք դուստրերի՝ Դիքիին, Մաքլենին եւ ինձ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներին, երեք տարեկանում, ես վարակվեցի պոլիոմիելիտով եւ ավելի քան հինգ տարի անցկացրի Մոնսենյոր Քորքբաուի հիվանդանոցում: Ծնողներս վաճառեցին իրենց ունեցվածքը՝ կյանքս փրկելու համար: Երբ հիվանդանոցը հարձակման ենթարկվեց, բուժումս ընդհատվեց, եւ ես մշտապես մնացի սայլակով:

Նախնիներս իմ ստեղծագործության լուռ պահապաններն են՝ ձեւավորելով այն ամենը, ինչ ստեղծում եմ: Հայաստանը մեր նահապետական՝ դիմադրության կենդանի մի արխիվ, որը վերապրել է անասելին եւ շարունակում է կանգուն մնալ: Ես կրում եմ նրա վկայությունը եւ տեղ եմ բացում անլսելի ձայների համար: Ես չեմ եղել Հայաստանում, սակայն նա ապրում է իմ ուրտում եւ երեւակայության մեջ: Մի օր հույս ունեմ կանգնել այնտեղ, որտեղ առաջին անգամ արմատավորվեցին նախնիներիս պատմությունները:

- Կա՞ն հայ արվեստագետներ եւ գրողներ, որոնք առանձնահատուկ են ձեզ համար:

- Շատ հայ արվեստագետներ խորապես թանկ են ինձ համար: Իմ երեւակայությունը ձեւավորած նկարիչներից են Արշիլ Գորկին, Ժան Գառզուն, Հովհաննես Այվազովսկին, Մարտիրոս Սարյանը, Գեւորգ Մուրադը եւ Սոսի Մածունյանը: Նրանց ստեղծագործություններում զգում եմ մեր ժողովրդի գույները, վերքերը եւ ոգին:

Գրողներից Վիլյամ Սարոյանը միշտ առանձնահատուկ տեղ է զբաղեցրել իմ ուրտում: Նրա պատմությունները փառաբանում են սովորական հայերի դիմացկունությունը, եւ նրա խոսքում ես միշտ ճանաչել եմ ինձ: Խորապես կապված եմ նաեւ բրիտանահայ հեղինակ Նուրիցա Մաթոսյանի ստեղծագործությանը, որը գրել է «Սեւ հրեշակը. Արշիլ Գորկու կյանքը» գիրքը: Նրա կենսագրությունը հազվադեպ անկեղծությամբ փոխանցում է Գորկու ցավն ու փայլը: Նուրիցայի հետ ընկերացանք, եւ նա նույնիսկ 1998 թվականին ներկա եղավ իմ ցուցահանդեսին Քուաքերների ցուցասրահում՝ իր գրքի հրատարակումից անմիջապես առաջ: Այդ հիշողությունը մինչ օրս թանկ է ինձ համար:

- Իսկ կա՞ն հայ արվեստագետներ, որոնց անձամբ հանդիպել եւ սիրել եք:

⇨5

Հասմիկ Ինճեճիկյան՝ երաժշտագետն ու հայ ազգային մշակույթի համեստ նվիրյալը

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*«Սփիւռհայ երաժիշտներու հայ երգերու հաւաքագրման ու աշխարհի երաժշտանոցներու գրադարաններուն տարածման սրբազան առաքելութեան ռահվիրան էր նա,- **Հասմիկ Ինճեճիկյանի** մահվան առիթով օրերս գրառում էր արել կանադահայ հասարակական գործիչ Սիլվա Ջիկերյանը:- Յիշատակդ վառ պիտի մնայ քեզի մօտէն ճանչցողներուն եւ հայ երգի տարածման աշխատանքիդ ընդմէջէն քեզի հետ հաղորդակից դարձած բոլոր անձերուն մօտ»: Այս տողերը կարդալուց հետո անմիջապես գրաքահարանիցս հանեցի Հ. Ինճեճիկյանի հեղինակած գրքերն ընծայագրերով եւ իր ձեռագրով լրացված թղթերը: Եվ ցանկացա ձեզ պատմել նրա մասին, ով ապրեց համեստ, բայց լեցուն կյանքով՝ հայ երաժշտարվեստն աշխարհում հնարավորինս լայնորեն ներկայացնելու եւ հայ երգի ծանոթ-անծանոթ էջերը նոտաներից կյանք ու բեմ բերելու նպատակադրմամբ:*

Փնտրի՛ր նրա անունը համացանցի հարուստ տիրույթում եւ խիստ սուղ տեղեկություններ կգտնես, թեեւ Հասմիկ Ինճեճիկյանի կյանքի գործը հայոց երաժշտական մշակույթի պահպանմանն ու հանրահռչակմանը նվիրված առաքելություն էր, որին լծվել էր սիրով եւ իրականացրել բարձր որակով: Մեր մեկերկու անձնական հանդիպումները տեւողությամբ կարճ են եղել, բայց տպավորությունս այն էր, որ գործ ունեմ շատ առաքինի, համեստ, աշխատասեր, մեծ շնորհի տեր կնոջ հետ: Հասմիկ Ինճեճիկյանի հետ առաջին հանդիպումս Երեւանի Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում էր, 2016 թ. սեպտեմբերի 27-ին: Այդ օրը վրաց մեծանուն բանաստեղծ եւ արձակագիր **Գուրամ Օդիշարիայի՝** հայերեն թարգմանությամբ բանաստեղծությունների գրքի շնորհանդեսն էր, եւ ես որոշեցի երկու հաճելին մեկտեղել՝ նախ, իրապես ծանոթանալով Կանադայից Երեւան ժամանած երաժշտագետի հետ, եւ ապա գրախոսականով հանդես գալով Օդիշարիայի գրքի շնորհանդեսին: Հասմիկ Ինճեճիկյանի հետ զրույցս գրադարանի ներքին բակում էր: Խնդրեցի ծանոթացնել իր հեղինակած գրքի բովանդակությանը, եւ թե ի՞նչն է մղել իրեն նման աշխատությունը կազմելուն: Դեռեւս հրատարակված էր Հայոց ցեղասպանությունը վերապրած կոմպոզիտորների ստեղծագործությունների առաջին ժողովածուն, մեկ տարի անց տպագրվեց նաեւ երկրորդ պրակը՝ հայ հեղինակների ռոմանսներով, իսկ Հ. Ինճեճիկյանի երրորդ գրքի թեման արդեն բացառապես պանդխտության երգեր էին՝ հիմքում հաճախ հայրենազրկության եւ կարոտի խորհրդանիշներ՝ արագիլ, ծիծեռնակ, կռունկ: Հայկական

Հասմիկ Ինճեճիկյան

երգերի այս ժողովածուները անգլերեն լեզվով են, բոլորը հավաքել, համակարգել է Հասմիկ Ինճեճիկյանը, եւ այս հավաքչությունը մեծ ջանքեր է պահանջել՝ աշխատանք արխիվներում, բնօրինակների ուսումնասիրություն (Երեւանի երաժշտագիտական գրադարանում, Չարենցի անվ. գրականության եւ արվեստի թանգարանում, այլուր): Ներկայացված են, ընդհանուր թվով, յոթանասուն երգեր, որոնց հեղինակներն են Կոմիտասը, Բարսեղ Կանաչյանը, Համբարձում Բերբերյանը, Նիկոլ Գալանտերյանը, Վահան Բեղելյանը, Գուրգեն Ալեմշահը, Հարություն Սամվելյանը, Ավետիս Մեսումենցը, այլք: Հ. Ինճեճիկյանի ձգտումը, երազանքն էր ոչ թե այդկերպ՝ ծաղկաքաղով, այլ վերը նշված յուրաքանչյուր հեղինակի բոլոր գործերն ամբողջապես ներկայացնելը, եւ հույս ուներ, որ կգտնվի այն նվիրյալը, որ մի օր հանձն կառնի այդ գործը: Իսկ Ինճեճիկյանի ժողովածուներում կգտնեք ոչ միայն մեզանում քաջածանոթ երգեր եւ ռոմանսներ, այլեւ բոլորովին անծանոթ կամ մոռացված գործեր, որոնք արխիվներից պեղել եւ գեղեցկորեն ներկայացրել է գրքերի հեղինակը: Օտարալեզու երգիչ կատարողների համար այս գրքերը կարող են թե՛ իրենց երգացանկը հարուստացնելու աղբյուր լինել, թե՛ հայ մշակույթը աշխարհի բեմերում ներկայացնելու առիթ հանդիսանալ: Ինքն էլ իր մանկավարժական գործունեության ընթացքում հայ եւ օտարազգի բազում սերունդների ծանոթացրել է հայ երաժշտարվեստին՝ ուսուցողական նյութ քաղելով հայ հեղինակների թողած հարուստ ժառանգությունից:

Արխիվներիցս փնտրում գտնում եմ Հասմիկ Ինճեճիկյանի մանրիկ, կոկիկ ձեռագրով լրացված թղթերը. իմ խնդրանքով իր կենսագրությունն էր շարադրել: Հիմա այս թերթիկներն ինձ համար ոչ միայն տեղեկատվության աղբյուր են, այլեւ թանկ հիշողություն՝ մասունքներ: Ծնունդով Բեյրութից՝ Հասմիկ Հայրապետյան-Ինճեճիկյանը, անցնելով Կանադա, ուսումնառությունը շարունակել է Մակգիլի համալսարանում՝ սանալով ձայնի կատարողական բաժնի վկայագիր եւ երաժշտագիտության մագիստրոսի տիտղոս: Մրցանակների է արժանացել համալսարանում ուսանելու շրջանում, հետագայում՝ 1977-ին Կանադայի եւ Սովետական Միություն համալսարանների միջեւ փոխանակման ծրագրի շրջանակներում իրեն կրթաթոշակ է նշանակվել: Նաեւ Հասմիկին հատուկ կրթաթոշակ է հատկացվել երաժշտագիտական ուսումնասիրությունները խորացնելու միտմամբ: Հեղինակն է մանկական ձայնագրությունների, ստացել է Կանադայի բազմամշակութային ընկերակցության օժանդակությունը: Գիտական ուսումնասիրություններ է ներկայացրել Կանադայի ավանդական երաժշտության ընկերակցության եւ Կանադայի երաժշտական ընկերակցության գիտաժողովներին: Հոդվածներ է հրապարակել Կանադայի ժողովրդական երաժշտության, մասնագիտական այլ ամսագրերում, հայկական պարբերական մամուլում: 1996-ին Մոնրեալի համալսարանում կազմակերպել է եռօրյա գիտաժողով՝ նվիրված հայ երաժշտությանն ու Սայաթ-Նովային: Համալսարանական ուսանողության շրջանում տարիից շուրջ քսան տարի առաջ դասախոսություններ է վարել Կոմիտասի մասին: Հ. Ինճեճիկյանն անդամակցել է NATS-ի (ձայնի ուսուցիչների միությանը. ԱՄՆ - Կանադա), կանադական համալսարանների երաժշտագիտական եւ ազգագրական ընկերակցություններին: Դասավանդել է Մակգիլի երաժշտանոցում: Շուրջ չորսուկես տասնամյակ դասական վոկալ դասավանդելով՝ ոչ միայն մշակել է իր օտարազգի, նաեւ հայ ուսանողների ձայնալարերը, այլ նաեւ կրթել միտքը՝ իրենց ներկայացնելով դասավանդվող երգերի հեղինակներին, ստեղծագործությունների ստեղծման պատմություններն ու շարժառիթները: Նրա կազմած ուսումնական ծրագրերում միշտ ընդգրկվել են հայ հեղինակներ:

Ձախից՝ աջ. բանաստեղծ եւ թարգմանիչ Գագիկ Դավթյան, երաժշտագետ Հասմիկ Ինճեճիկյան, բանաստեղծ եւ արձակագիր Գուրամ Օդիշարիա, բանաստեղծուհի Հասմիկ Սարգսյան

Հայոց ցեղասպանության 100-ամյակին էր, որ իր մոտ ծագեց հայկական երգերի ժողովածու ստեղծելու միտքը: Նախ, դիմեց «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությանը, որի օգնությամբ հայ եւ օտարազգի երգիչների մասնակցությամբ համերգ կազմակերպեց՝ ներկայացնելով Մեծ եղեռնը վերապրած հայ կոմպոզիտորների, այդ թվում՝ Կոմիտասի երգերը: Դրան հաջորդեց այդ երգերը գրքերի միջոցով ի մի բերելու եւ տարածելու աշխատանքը:

Հասմիկ Ինճեճիկյանի հեղինակած ժողովածուները

Ժողովածուները ներառվել են ամերիկյան «Թեոդոր Ֆրոնք» ընկերության հրատարակած կատալոգներում: Իր եռահատորյակը հեղինակը տրամադրել է տարբեր երկրների երաժշտագիտական գրադարաններին, այն տարածելու նպատակով համագործակցել գերմանական «Հարասովիչ» ընկերության հետ, նաեւ անձամբ ներկայացրել հայաստանյան կրթամշակութային հաստատություններում:

Հասմիկ Ինճեճիկյանը հաճախ էր գալիս Հայաստան: Այդ այցերից մեկին էր, որ կայացավ մեր երկրորդ հանդիպումը՝ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը՝ իմ բանաստեղծական գրքերից մեկի շնորհանդես-համերգին: Այդ օրվա պայծառ հիշողությամբ էլ ավարտեմ լուսավոր մարդու, երաժշտի եւ հայի մասին խոսքս:

Սյուզան Աճեմյան. Ստեղծագործության լուռ ուժը

⇨4 - Ինձ ձեւավորած հայ արվեստագետներից մի քանիսին բախտ եմ ունեցել ճանաչել անձամբ: Իմ ուսուցչուհին՝ քանդակագործ Գյուլեն Թորոսյան Տեր-Պողոսյանը, իմ առաջին ոգեշնչումներից էր: Ես միշտ հիացել եմ նաեւ նրա ամուսնու՝ Շահե Տեր-Պողոսյանի, ինչպես նաեւ նրանց դուստրերի՝ Մարալի եւ Նանորի աշխատանքներով, որոնք ինքնուրույն արվեստագետներ են: Խորը սեր եմ տածում նաեւ Լեւոն Ժամկոչյանի նկարների եւ անմոռանալի Փոլ Կիրակոսյանի արվեստի նկատմամբ:

Շատ հայ արվեստագետների գործեր եմ սիրել, սակայն Հեռավոր Արեւելքում ապրած տարիներն ինձ հեռու պահեցին հայ արվեստի աշխարհից: Հոնկոնգում երկար ժամանակ ես միակ հայ արվեստագետն էի՝ միայնակ կրելով իմ ժառանգությունը, բայց միշտ կենդանի պահելով այն իմ աշխատանքներում:

Իմ հայկական ներշնչումները գալիս են այն պատմություններից ու ավանդույթներից, որոնք ընտանիքս տարել է պատերազմի, աքսորի եւ գոյատեւման միջով: Ես պահպանում եմ իմ մշակույթն առօրյա փոքր ծեսերում՝ մեր տներում, մեր երաժշտության մեջ, մեր հիշողություններում: Նույնիսկ երբ իմ գործերում բացահայտ հայկական խորհրդանիշներ չկան, ոգին միշտ ներկա է: Իմ ժողովրդի դիմադրողականությունը, ընտանեկան կապերի նրբությունը եւ անհետանալուց հրաժարված ազգի հպարտությունը ձեւավորում են ինձ եւ իմ ստեղծագործությունը...

ՍՅՈՒԶԱՆ ԱՃԵՄՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՇՈՂ ՊԱՐՏԵԶԸ

Իմ հոգու լուռ հողից
հիշող պարտեզն է զարթնում.
աչքեր՝ գունաս լուսինների պես բարձրացող,
փաթիլներ՝ ականջ դնող
հողի տակ թաղված հին երգերին:
Յուրաքանչյուր գիծ շշուկ է,
յուրաքանչյուր հյուսվածք՝ գաղտնի հմայք,
յուրաքանչյուր ձեւ՝ մի հիշողություն,
որ բացվում է մթության մեջ:
Այս նկարը մի փոքրիկ կախարդանք է,
մի վայր, որտեղ անտեսանելին է հայտնվել:
Այստեղ, այս սրբազան կանաչում,
ես թե՛ պահապանն եմ,
թե՛ ծաղիկը:

ԴԻՏՈՂ ՊԱՐՏԵԶԸ

Լռության մեջ՝ արմատի ու երկնքի արանքում,
ուր պարույրներն են ծաղկում, սվերները՝ հառաչում,
պարտեզը դիտում է՝ լիովին արթուն.
յուրաքանչյուր աչք՝ հայելի, յուրաքանչյուր ցողուն՝ սյուն:
Նրանք չեն թարթում, նրանք չեն քնում,
հազար հայացքներ՝ մեղմ ու խոր,
հսկում են այն երազները,
որ չենք համարձակվում արտաբերել:

Ժամանակն է բանալու փակագիծերը

Արդեօք վարչապետ Փաշինեանը սկսած է զառանցե՞լ...

Կասարուածը այլեւս շատ վտանգաւոր է: Արդեօ՞ք վարչապետ Փաշինեանը սկսած է զառանցել... Ուշադրութեամբ դիտենք անոր դէմքը, երբ ան պաշտօնապէս կը յայտարարէ, թէ Ս. Էջմիածնայ՝ փասօրէն ամենահաւատարիմ պաշտպան բարեւարները Մայր Աթոռն իր գանձերով մէկտեղ կ՚ուզեն Հայաստանէն դուրս բերել...:

Միւս կողմէ, ինքզինք աջ ու ձախ կանոններու եւ կանոնաւորութեան հերոս ու պաշտպան ներկայացնողը, հակառակ Եկեղեցւոյ կանոններուն, աւելի քան քառորդ դար իր կենակիցին հետ հանգիստ ուրտով ապրելէ եւ իբրեւ արդիւնք՝ չորս զաւակներու ալ հայր դառնալէ ետք, յանկարծ այսօր կ՚որոշէ իր կենակցութիւնը վերջապէս «օրինականացնել» եւ գոնէ ըստ պետական օրինի՝ «զագս-ով» (civil) պսակադրութիւն կնքել: Ակնյայտօրէն այս բոլորը՝ որպէսզի նուազեցնէ իր եւ իր կենակիցին հասցէագրուող տեղին, սակայն արդէն անյարմար խօսակցութիւնները, ինչպէս նաեւ արդարացնէ եկեղեցւոյ մէջ իբրեւ թէ «բարեկարգչական» իր այլապէս ալ անօրինական եւ անհեթեթ յաւակնութիւնը...:

Այս պահուն վստահաբար սոյն տողերը ընթերցողը տեղեակ է, թէ քանի մը օր առաջ վարչապետ Փաշինեանը աւելի քան քսանհինգ տարիներ, հակառակ իր «բարեկարգելու» ձգտած Եկեղեցւոյ կանոններուն, եւ նոյնպէս ալ երկրին կանոններուն, իր կենակիցին հետ չորս զաւակներու հայր դառնալէ ետք, «փիչ մը ուշ», յանկարծ որոշեց, գոնէ ըստ պետական կանոնով՝ civil ամուսնանալ:

Նոյնպէս, ընթերցողը հաւանաբար ականատես եւ ականջալուր եղած է, վերջերս խումբ մը թղթակիցներու տուած անոր հարցազրոյցին, ուր, ըստ երեւոյթին, նորանոր զրպարտութիւններ չգտնելու փաստով ճարահաս, այս անգամ, իբրեւ թէ հարց-պատասխաններու երկար շարքով մը, առանց վարանելու, իր այսպէս կոչուած «Վարչապետի հանգամանքով», ուզեց պաշտօնապէս թղթակիցները համոզել, թէ այն հանրածանօթ սփիւռքահայ մեծանուն անձնաւորութիւնները, որոնք վերջերս կոչերով հանդէս եկան ի պաշտպանութիւն մեր երկիրազարամեայ Հայաստանեայց Եկեղեցւոյն, Մայր Աթոռին եւ Ամենայն Հայոց Հայրապետին, ինք իբր լաւ տեղեկացուած է, թէ անոնց բուն նպատակը եւ ստոր ծրագիրը՝ «Ս. Էջմիածինը իր գանձերով հանդերձ դուրս բերելն է Հայաստանէն եւ տանիլ անորոշ օտար քաղաք մը՝ Վիեննա, Մոսկուա, եւ ով գիտէ տակաւին ո՛ւր»...:

Բնականաբար, երբ վարչապետ Փաշինեան, ըստ երեւոյթին ուրիշ ելք չունենալով, ստիպուի այս մակարդակի իջնել եւ այսքան բացայայտ սուտ մը, հրապարակաւ արտասանել, զայն ծածկել փորձելով դէմքին վրայ դրած կեղծ ժպիտով ու քմծիծաղով, ողջմիտ ու տրամաբանող հայորդիներուն համար այլ բացատրութիւն չի մնար բացի եզրակացնելէ, թէ կա՛մ այն է, որ տուեալ մարդը մտահոգիչ հոգեկան անհաւասարակշիռ վիճակի մը մէջ կը գտնուի (նկատի ունենալով նաեւ աւելի քան 25 տարիներ ետ յանկարծ առնուած՝ գոնէ պետականօրէն օրինապէս ամուսնանալու իր խիստ «յապաղած» որոշումը) եւ կա՛մ ան այնքան ծանր ճնշումներու տակ կը գտնուի իր թուրք եւ ազերի հովանաւորներուն կողմէ, որ չի վարանիր նոյնիսկ այսքան բացայայտօրէն ծիծաղելի սուտ մը յօրինել:



Իր այս սուտով ան չի վարանիր նաեւ, նոյնիսկ յանձն առնելու այն փոքր թիւով հայերու կողմէ իր նկատմամբ որպէս վարչապետ ունեցած՝ քաղաքավար յարգանքը կորսնցնելու վտանգը:

Ցաւալին սակայն այն է, որ փիչ մը ամէն տեղ կ՚ապրինք ապատեղեկատուական այնպիսի ահաւոր մթնոլորտի մէջ, ուր բացառուած չէ, որ տակաւին կը գտնուին հաւատացողներ նոյնիսկ երբ Փաշինեան ըսէ, թէ «*յայտնուած է չորքոտանի աւանակ մը, որ երկու թեւերով կը թռչի...*»:

Իսկապէս ալ երկնակի ցաւալի երեւոյթը այն է, որ արդէն իսկ առանց ուշանալու, սկսած են յայտնուիլ, «դաւադրութեան տեսութեան» ռահվիրաներ, որոնք չեն բացառեր այն վարկածը, թէ. «Փաշինեան հաւանաբար ունի ԱԱԾ-ի գաղտնի արձանագրութիւնները, որոնք կը փաստեն Ս. Էջմիածինը «փախցնելու» այս մտադրութիւնները»:

Սակայն ափսոս որ կատարուածը պարզապէս «զուարճալի» փոքր պատահար մը չէ երբէք: Շատ մեծ ցաւ է գիտակից որեւէ հայու համար այսպիսի գերտագնապային օրերուն, տեսնել Հայաստանի վարչապետի հանգամանքը ունեցող անձ մը, որ պատրաստ է հրապարակաւ այս ասիճանի խոշոր ցնդաբանութիւն եւ ստախօսութիւն մը կատարելով այսքան նուաստանալ:

Արդարեւ, պէտք է ենթադրել, որ Փաշինեան չ՚անդրադառնար, որ այսքան խղճալիօրէն ծիծաղելի սուտ մը պատշաճաւոր կատարող վարչապետի մը ուրիշ ոչ մէկ յայտարարութիւնը կամ «հաւատիացումը» այլեւս որեւէ իմաստ կամ արժէք կրնայ ներկայացնել, բանիմաց որեւէ հայու մօտ:

Ինչ կը վերաբերի օտարներուն, այն ինչ որ մեզի՝ հայերուս ծիծաղելի եւ կամ խորին մէջ՝ մահացու մեղք կը նկատուի, անոնց բոլորովին անտարբեր կը թողու, այնքան ժամանակ, որ Փաշինեան իրենց ձեռին մէջ կամակատար խամաճիկ մը դարձած է, որ հաւատարմութեամբ կը կատարէ իրենց պատուէրները:

Թուրքը եւ ազերին արդէն յաջողեցան, մեր սուրբ Արարատը եւ մէկուկէս միլիոն նահատակներու արդար դատը՝ Ցեղասպանութիւնը, այնքան հեշտութեամբ սրփել տալ Հայաստանի պաշտօնական արձանագրութիւններէն, խօսոյթէն եւ օրակարգէն, հիմա ալ ոգի ի բռին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դարաւոր կառոյցը խեղճացնելու ճամբուն վրայ են, շնորհիւ նոյն Փաշինեանին: Իր հերթին, Ամերիկան, գրեթէ յաջողցուցած է որպէս գերտերութիւն՝ նոր եւ խոր ճեղք մը ստեղծել իր մրցակից Ռուսաստանի հարաւ-արեւմտեան սահմաններուն վրայ:

Եթէ այսպիսի մեծ «իրագործումներ» այսքան դիւրութեամբ ուրիշ որեւէ արարած մըն ալ «նուիրէ» այդ երկիրներուն, անշուշտ թէ անոնք «խաղաղութիւն» կը խոսանան այդ շրջանին մէջ, որպէսզի չխանգարուի իրենց համար այսքան նպաստաւոր սպասարկուի մը աշխատանքը...:

Մեծ խաղացողներէն ի վերջոյ որո՞ւն կը հետաքրքրէ Արարատը, Ցեղասպանութիւնը, կամ Հայաստանեայց Եկեղեցիին կառոյցը եւ անոր՝ այսպէս կոչուած բարեկարգութիւնը: Օտարին համար մեզի՝ հայ կոչեցեալ խեղճերս, փիչ մը ժամանակ կը պոռչանք: Հայաստանի մէջ, որ այս ընթացքով շուտով կրնայ վերածուիլ՝ Արեւմտեան Ասրպէյճանի, հայրենաբնակ հայերու կարեւոր թիւով մէկ խաւը զբաղած է ուսելով եւ Հայրենիքին կենացը՝ ամպագորգոռ բաժակաճառեր արտասանելով: Միւս կողմէ, ինչ կը վերաբերի Սփիւռք կոչուածին, երբ Ցեղասպանութեան յաջորդող երրորդ սերունդն ալ հեռանայ երկրային իր կեանքէն եւ երթայ դէպի յաւերժութիւն, հոն ալ այլեւս բացարձակ լռութիւն եւ հանդարտութիւն պիտի տիրէ:

Կարճ խօսքով, ահաւասիկ, թէ ի՞նչ կ՚արժէ ամէն գնով խաղաղութիւնը... այո՛, խաղաղութիւն եւ մահացու լռութիւն՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, շնորհիւ Նիկոլ Փաշինեանին եւ իր գործակիցներուն...:

Ամօթ, հազար ամօթ բոլորիս, եթէ թողունք որ մեր վերջը այս ըլլայ:

Խմբագրական
«Պայքար» շաբաթաթերթի

ԳԵՂԱՄ ՍԿՐՏՉՅԱՆ

Իրանը, համենայն դեպս, մենակ չէ

Լաւ է, երբ արտաքին վտանգի ենթարկված երկիրը մենակ չէ: Տպալ դեռոքում դա մեր անմիջական հարեւան, բարեկամ Իրանն է՝ ամերիկյան սպառնալիքի հանդիման: Միջազգային մամուլը շարունակում է հետեւել նրա շուրջը արագ ծավալվող իրադարձություններին:

Ամերիկա-Իրան անուղղակի բանակցություններին զուգընթաց մեր հարեւան հզոր տերությանը նաեւ ամերիկյան հարվածի հավանականության պահպանման պայմաններում փետրվարի 19-ին չինական «ՆԵթԻզի» (NetEase) կայքը հաղորդում էր, թե Ռուսաստանը օդերաթիվ կերպով ակտիվացրել է գործողությունների համաձայնեցումը Թեհրանի հետ, եւ փաստորեն փակվել է ամերիկյան ավիակիրների խմբի առաջխաղացման հանգուցային ուղին: Բացի նրանից, որ ամսի 17-ին զորավարժությունների ընթացքում Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսը ժամանակավոր փակել էր Հորմուզի նեղուցը, ինչն անմիջապես ազդել էր նավթի համաշխարհային գների վրա (այդտեղով է անցնում աշխարհում նավթի արտահանման մինչեւ մեկ երրորդը), արդեն փետրվարի 19-ին Իրանն ու Ռուսաստանը համատեղ ռազմածովային զորավարժություն էին անցկացնում Օմանի ծովածոցում եւ Հնդկական օվկիանոսի հյուսիսային մասում: «Մոսկվայի միջամտությունը,- գրում է կայքը,- զգալիորեն փոխել է ուժերի հավասարակշռությունը. զորավարժությունների տարածքը համընկնում է այն երթուղու հետ, որով ամերիկյան նավերը շարժվում են դեպի տարածաշրջան»:

Ռուսական եւ իրանական նավերի համատեղ գործողությունները ցույց են տալիս արտաքին ճնշման դեպքում համաձայնեցված գործելու պատրաստակամությունը: Մոսկվան, ըստ էության, Թեհրանին ռազմավարական մանեւրի տարածք է տրամադրում եւ միաժամանակ Վաշինգտոնին ազդանշան է տալիս, որ տարածաշրջանում միակողմանի որոշումների դարաշրջանն ավարտվել է:

«ԱՄՆ-ի նավատորմիղը Իրանի ափերի մոտ է: Չինաստանը պատասխանել է ականակիրներով»,- այսպես է սկսվում ռուսական «ՌուՆյուզ24» նորությունների ծառայության փետրվարի 21-ի հաղորդագրության վերնագիրը: Արդյո՞ք աշխարհը մեծ պատերազմի շեմին է. սա էլ դրանից բխող հարցադրումն է: Ինչպես հաղորդվում է, ամերիկյան ռազմական գերատեսչությունը հենց այդ օրն էր նախատեսել որպես Իրանին հարվածելու պատրաստության օր: Մինչ ամերիկացիները պատրաստվում էին, գրում է լրատվականը, Պեկինն արեց մի քայլ, որը Սպիտակ տանն ակնհայտորեն չէին կանխատեսել: Չինաստանի՝ մասնավորապես տնտեսական-առեւտրային շահերի համակարգում Իրանին կարեւոր տեղ է պատկանում: Հենց նշված օրը Հորմուզի նեղուցում եւ Օմանի ծովածոցում ընթանում էին Ռուսաստանի մասնակցությամբ «Ծովային անվտանգության գոտի-2026» համատեղ զորավարժությունները: Ձեւական առումով դրանք պլանային զորավարժություններ էին, փաստացի՝ կենդանի վահան: Իրանին հարվածելը, ռիսկի դիմելով դիպչել չինական կամ ռուսական ռազմանավի, կնշանակեր հրահրել Մերձավոր Արեւելքի հակամարտության շրջանակից շատ ավելի հեռուն տարածվող միջադեպ:

Թե նման քայլերն այնուամենայնիվ որքան լրացուցիչ զսպող ազդեցություն կունենան կամ չեն ունենա ԱՄՆ-ի վրա, իրադարձությունների հետագա ընթացքը ցույց կտա:

Պաշտպանության ոլորտի՝ հատկապես ռուս-իրանական համագործակցության հարցին ամսի 23-ին անդրադարձել է թուրքական «Այդինլիկ» թերթը: Իրանի գլխավորությամբ 2019 թվականից անցկացվող «Ծովային անվտանգության գոտի» համատեղ վարժանքները համարվում են ոչ արեւմտյան խաղացողների, հիմնականում Իրանի, Ռուսաստանի եւ Չինաստանի միջեւ ծովային անվտանգության ոլորտում ռազմական համագործակցության զարգացման առավել ակնառու օրինակներից մեկը, գրում է թերթը:

Թեմային մեկ այլ տեսակետից անդրադարձել է նաեւ բրիտանական «Ֆայնենշըլ թայմս»-ը: Ըստ հրապարակման, Իրանը գաղտնի կերպով 500 միլիոն եվրոյի զենքի պայմանագիր է կնքել Ռուսաստանի հետ (այս մասին կարդալ նաեւ էջ 6-ում Ս. Սարգսյանի վերլուծականը)՝ շարժական զենիթահրթիռային համակարգի (ՇԶՀՀ) հազարավոր հրթիռներ ձեռք բերելու համար, Իսրայելի հետ անցյալ տարվա հակամարտության պատճառով թուլացած իր ՀՕՊ համակարգի վերականգնման խոշոր ջանքերի շրջանակներում: Աղբյուրի պնդմամբ, պայմանագրով նախատեսվում է, որ Ռուսաստանը երեք տարվա ընթացքում պետք է մատակարարի 500 «Վերբա» շարժական ՀՕՊ համակարգեր եւ 2500 հրթիռ:

Այս տեղեկատվությունը ռուսական պաշտոնական աղբյուրների կողմից չի հաստատվել: Սակայն, ինչպես նշվում է, Մոսկվայում Իրանի դեսպան Քազեմ Ջալալին անուղղակիորեն հաստատել է տվյալ շաբաթվա ընթացքում ռուսական ռազմական բեռների ստացումը: «Վերջին մի քանի տարիների ընթացքում մենք ռազմական ոլորտի մի շարք կարեւոր համաձայնագրեր ենք ստորագրել Ռուսաստանի հետ: Մեր տրանսպորտային ինֆրաթիռների աշխատանքը միայն ցույց է տալիս, որ այդ համաձայնագրերը համակարգված կերպով իրականացվում են»,- թերթի հավաստմամբ՝ հայտարարել է նա պետական հեռուստատեսությամբ:

Ըստ բերվող փորձագիտական կարծիքների, այդ մատակարարումներն արտաքուստ չեն փոխի Իրանի հնարավորությունները, բայց որոշ բան նրան այնուամենայնիվ կտան:

«Կավկազ թամաշա»

«Մոլլա՛, ուզո՞ւմ ես սիլլա»

Իզուր չէր Ջարենցն իր «Կավկազ թամաշա» բուֆոնատում կերպարներից մեկի բերանով սպառնում կովկասյան թաթարների (բնորոշումը Վլադիմիր Իլյիչ Լենինինն է) կրոնապետին. «Մոլլա՛, ուզո՞ւմ ես սիլլա»: Արժանի ապտակ, եթե կուզեք՝ չափալախ՝ մեծամիտ Մոլլի մոքին, որը փորձում էր, ինչպես նրա այսօրվա պաշտոնակիցը, խաղեր տալ կովկասյան մյուս ազգությունների, մանավանդ հայերի դեմ:

Մեծ գրողները մեծ տեսանողներ են նաեւ, վիզիոներներ, տեսիլք, տեսլական ունեցող մարդիկ: Հանճարները մանավանդ, որոնք տեսնում են ապագան իր կենդանի դերակատարներով նաեւ:

Դրանցից մեկը հե՛նց մի մոլլա է, իբր Աստծու պարգեւած Ալլահշյուքուր եւ իբր փաշայի որդի՝ Փաշազադեն: Ո՞վ, ե՞րբ, ի՞նչ հանգամանքներում է այս անասվածին տվել «Կովկասի մահմեդականների հոգեւոր առաջնորդ» տիտղոսը, ո՞ր բարեմասնության համար:

Ճիշտ է, հոգեւոր կրթություն ստացել է տարբեր **մեդրեսեներում**, Սամարղանդ եւ այլուր: Սակայն, որքան որ հայտնի է նրա կենսագրությունից, նա չի անցել Ղոմի պարսկական բարձրագույն դպրոցը, շիիթական սկզբունքայնության եւ աստվածաբանության հոգեւոր համալսարանը: Գուցե արժանի չե՞ն համարել նրան:

Փոխարենը, ըստ տեղեկությունների, Փաշազադեն ֆենանոով եւ անխուսափելի կաշառքով աչքն է մտել փաշաեւների եւ ալիեւների նախիջեւանյան կլանին, հավատարմություն խոստացել քաղաքական ու տնտեսական այդ մաֆիային:

Նա ծառայում է, անխոնջ, փեշերը փռած Կովկասի վրա՝ փեշերի տակ ընկածներին «բաշխելով» որովայնի գազային փուչիկներ, չխնայելով թե՛ Ղազախստանի, թե՛ Դաղստանի, թե՛ Վրաստանի, թե՛ Գիլանի մահմեդականներին:

Բայց նրա գլխավոր թիրախը մնում է Հայաստանը, քրիստոնյա՛ Հայաստանը, որտեղ, հանձին Նիկոլ Փաշինյանի գտել է իր ծագումնաբանական՝ փաշա-փաշին մտերմական կապը, Հայ եկեղեցու դեմ «սրբազան պատերազմի»՝ ջիհադի իր զինակցին:

Ափսոս, շատ ափսոս, որ մեր Վեհափառ Հայրապետը տարիներ առաջ մեկ թե երկու անգամ, Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդի՝ Կիրիլ պատրիարքի միջնորդությամբ, եռակողմ ժողովի է նստել այդ մոլլի հետ, որն այսօր մեր Սուրբ Եկեղեցին եւ Հայրապետին հայտարարում է «նացիստ», «ֆաշիստ», «ռեւանշիստ», «տեռորիստ»:

Ու պատկերացնել, որ Փաշազադեն ինքը ծագումով թալիշ է, Կովկասում եւ Իրանում բազմաթիվ դարեր ապրող շուրջ մեկ միլիոն էթնիկ ժողովրդի զավակ, եւ փոխանակ պայքարելու իր ազգակիցների իրավունքները, թալիշերեն լեզուն, մշակույթը, նույնիսկ կրոնը, դպրոցներն ու մզկիթները պաշտպանելու, լծվել է Ալիեւ-Փաշաեւ կլանի բռնատիրությունը պաշտպանելու գործին, զուգահեռ՝ մեր ժողովրդի հետ խոսում է «Կովկասի մահմեդականների հոգեւոր առաջնորդի» դիրքերից եւ կամք է թելադրում անկրոն, անաստված, անազգ, անմշակույթ մեր իշխանությանը, որը պատրաստ է թուրք-թաթարներին հանձնելու Եկեղեցին, Ազգը, Հող հայրենին, Պետությունը:

Ջարենցի հետ չկրկնե՞նք՝ «Մոլլա, ուզո՞ւմ ես սիլլա»:

Մոլլեն ու գործընկերները արժանի են դրան:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Վենսի այցը Հայաստան եւ Ադրբեջան

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

Մ. Նահանգների փոխնախագահ **Ջեյմս դի Վենսի** պատմական այցելությունը Հայաստան եւ Ադրբեջան պետք է ոչ թերագնահատել, ոչ էլ գերագնահատել: Մինչ դա Հայաստան եւ Ադրբեջան կատարված ամենաբարձր մակարդակի պաշտոնական այցելություն էր, անհրաժեշտ է ճիշտ հասկանալ քաղաքականության նրբերանգները ե Ամերիկայի շահերը Հարավային Կովկասում:

Դժբախտաբար Վենսի պատմական այցելությունը շատ սահմանափակ կերպով լուսաբանվեց ամերիկյան մամուլում: Այն չդարձավ կարեւոր թեմա, եւ այցելության իսկական բնույթը լայնորեն չքննարկվեց, քանի որ սովորական ամերիկացու համար այն իրենից հետաքրքրություն չէր ներկայացնում:

Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ թվիթերյան իր գրառման վերացումը դարձավ բավական լուրջ քննադատության թեմա: Այն քննադատվեց ինչպես ամերիկյան առաջավոր մեդիա աղբյուրների, այնպես էլ Մ. Նահանգների կոնգրեսականների եւ այլ հանրային պաշտոնյաների կողմից: Այլ խոսքով, այցելության վերաբեյալ ամերիկյան մամուլի գլխավոր շեշտադրումը հենց այս հարցի վրա դրվեց եւ ոչ թե այցի բուն էության:

Անկախ այս բոլորից, **Թրամփի** երկրորդ պաշտոնավարումը կարողացավ Ամերիկային շատ ավելի մոտեցնել Հարավային Կովկասին, այսինքն՝ իր երկար սպասված նպատակին, հզորացնելով իր ներկայությունը եւ նվազեցնելով Ռուսաստանի ազդեցության ոլորտը: Դրանից առաջվա փորձերը, ինչպես օրինակ՝ Վրաստանի գործոնը առաջ մղելը (նախագահ **Ջորջ Բուշի** որք) անհաջող էին: Ներկա պայմաններում Հայաստանի եւ Ադրբեջանի միջոցով կատարվածը շատ ավելի արդյունավետ էր Ամերիկայի համար: Իրականում Վենսը ոչ Հայաստանին, ոչ էլ Ադրբեջանին է պաշտպանում: Նա պարզապես Ամերիկայի աշխարհաքաղաքական շահերն է հետապնդում Կենտրոնական Ասիայից սկսած մինչեւ Եվրոպա երկարող ճանապարհին, որի մի մասը՝ Հարավային Հայաստանի տարածքով ընդգրկված է «Հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (TRIPP) Թրամփի ուղղությամբ: Սա միջազգային քաղաքականության մեջ ընդունված բնականոն գործընթացներից մեկն է:

Սակայն փոխնախագահի այցը մի շարք վիճելի քննարկումների պատճառ դարձավ Երեւանում: Հնարավոր ներդրումների վերաբերյալ լայնածավալ քննարկումներ կատարվեցին Հայաստանում, հիմնականում թյուրըմբռնման եւ սխալ մեկնաբանության պատճառով:

Փոխնախագահ Վենսը չնշեց, որ ԱՄՆ-ն միլիարդավոր դոլարներ է ներդնելու Հայաստանում: Թարգմանիչը սխալ արտահայտվեց, ասելով, որ ամերիկյան ներդրումներ են լինելու: Փոխնախագահը ընդամենը ասաց, որ Մ. Նահանգների կառավարությունը «կանաչ ճանապարհ է բացելու միլիարդավոր դոլարների արժողությամբ տեխնոլոգիաներ եւ զանազան այլ ապրանքներ արտադրող ամերիկյան խոշոր ընկերությունների առաջ, որպեսզի նրանք ներդրումներ կատարեն Հայաստանում»: Փաստորեն Թրամփի վարչակազմի ուշադրության կենտրոնում Մ. Նահանգներին այդ ներդրումների շնորհիվ հետագայում եկամուտներ ապահովելն է՝ ամերիկյան ապրանքներ, տեխնոլոգիաներ եւ զենք վաճառելով աշխարհով մեկ: Այս հարցը լուրջ վիճարկումների պատճառ դարձավ, հատկապես հայկական իշխանությունների կողմից, որոնք փորձեցին ի շահ իրենց օգտագործել այդ այցելությունը, ներկայացնելով այն իրենց անձնական ձեռքբերումը:

Վենսի մյուս արտահայտությունը, որ տեղյակ է Հայաստանում սպասվող ընտրությունների անցկացման մասին, եւ ըստ էության նաեւ պաշտպանությունը գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի թեկնածությանը, առավել սրեց իրավիճակը: Վենսի կողմից սխալ էր ընդհանրապես անդրադառնալ հայաստանյան ընտրություններին, հատկապես որ Ռուսաստանի կամ այլ պետությունների կողմից ընտրություններին միջամտելու եւ այդ գործողությունը անընդունելի համարելու թեման բավականին հաճախ էր քննարկվել Ամերիկայում վերջին տասնամյակում: Մյուս կողմից կարելի է նաեւ հասկանալ, որ Մ. Նահանգների պաշտպանությունը, եթե ոչ անձամբ Փաշինյանին, այլ ուղղված էր մեկ այլ անձնավորության, որը առաջ կտաներ հօգուտ Ամերիկայի օրակարգը, ինչը «ռեալպոլիտիկի բնականոն գործընթաց է»:

Համագործակցության տեսակետից ԱՄՆ-ի համար Հայաստանն ու Ադրբեջանը միեւնույն մակարդակի վրա են գտնվում:

Քննարկումների մյուս թեման առնչվում էր Բաքվում բանտարկված հայ գերիների հետ: Վենսի խոստումը, որ կբարձրացնի այդ հարցը, գործնականում մնաց սոսկ հռետորական արտահայտություն, ինչը ցավալի է առաջատար մի թեկնածուի համար, որ հավակնում է դառնալ Մ. Նահանգների հաջորդ նախագահը: Եթե Վենսը բանտարկյալների հարցը չքննարկեց Բաքվում, նշանակում է, որ նա չպահեց իր խոստումը: Իսկ եթե քննարկեց եւ անարդյունք մնաց եւ չհրապարակվեց, նշանակում է, որ ադրբեջանական իշխանությունները պարզապես լուրջ չընդունեցին հարցը, ինչը հեղինակության եւ իշխանություն բանեցնելու հարց է:

Հակառակ այս բոլորին, այցելությունը իրոք պատմական էր, եւ շատ բան այժմ կախված է Հայաստանի իշխանություններից: Ժամանակը ցույց կտա, թե նրանք ԱՄՆ-ի հետ ավելի կխորացնե՞ն հարաբերությունները, կկառուցե՞ն նոր ասոմակայան՝ ներդնողներին հրապուրելով, թե՞ կօգտագործեն առիթը առավել հիմնավոր եւ խիզախ օրակարգ առաջ տանելու Մ. Նահանգների հետ: Մի բան հստակ է: Գնդակն այժմ Հայաստանի դաշտում է, եւ շատ բան կախված է իշխանությունների որոշումներից:

Ինչ վերաբերում է Բաքու կատարած այցին, այստեղ շատ հետաքրքրական մանրամասներ կան հատկապես կազմված ԱՄՆ-Ադրբեջան ռազմավարական համագործակցության փաստաթղթերի հետ: Հայաստանը նույնպես նման փաստաթուղթ է ստորագրել, բայց նման փաստաթղթերի օգտակարությունը կարող է տեսանելի դառնալ, եթե ստորագրող պետությունները իրոք ցանկանան ավելի լայն համագործակցություն ծավալել ԱՄՆ-ի հետ: Ադրբեջանի պարագայում նման ցանկությունը ակնհայտ է:

Հետաքրքրական է նաեւ այն, որ Ադրբեջանը Մ. Նահանգներից ձեռք է բերում որոշակի քանակի ռազմական հանդերձանք, սարքավորումներ եւ տեխնոլոգիա, որն ըստ էության կարելի է օգտագործել միայն Իրանի դեմ: Այս տեսանկյունից Բաքուն ցուցադրաբար ամրապնդում է իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, միեւնույն ժամանակ ցույց տալով Ռուսաստանին եւ Իրանին, որ ինքն է գլխավոր դերակատարը տարածաշրջանում եւ կարող է ցանկացած ժամանակ անախորժություններ պատճառել երկու պետություններին, վայելելով ԱՄՆ-ի եւ Թուրքիայի անմիջական պաշտպանությունը: Գործի դնելով որոշակի փաստարկներ, Ադրբեջանը փորձում է Հարավային Կովկասի բոլոր դերակատարներին ցույց տալ իր կրկնապատկված վարկն ու կարեւորությունը տարածաշրջանում:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի համատեղ երազը

Իրադարձությունները տեղի են ունենում մացածին Ցորրորդ Հանրապետությունում: Ստացվում է այնպես, որ համաժամանակյա երազի մեջ Իլհամն ու Նիկոլը կերպարանափոխվում են, եւ մեկը հայտնվում է մյուսի մեջ: Իլհամը դառնում է Նիկոլ, Նկոլն էլ՝ Իլհամ:

Մաս 1-ին. Իլհամն առավոտյան աչքերը բացում է Սեւանի կառավարական ամառանոցում, իսկ Նիկոլը՝ Ադրբեջանի Զագուլբա նախագահական պալատում:

Ալիեւի դեմքը պայծառանում է, երբ տեսնում է պատգամքից բացվող գեղեցիկ տեսարանը դեպի բաղձալի «Գյոյչա» լիճ: Ոգեւորված ուզում է մայրենի լեզվով մի քանի բառ արտաբերել, բայց սկսում է խոսել իրեն անհայտ Իջեւանի բարբառով: Մոլագարի պես վազում է դեպի լճափ, կռանում է, որ բռերով ջուր խմի, բայց ալիքների մեջ տեսնում է Նիկոլի լողացող արտացոլանքը, ավելի ճիշտ՝ ինքն իրեն, բայց Նիկոլի դեմքով՝ մերթ թրաված, մերթ անթրաշ:

Բաքվի սուլթանիկը քիչ է մնում կաթվածահար լինի. ինքը՝ Հեյդարի որդին, ինչ-որ գյավուրի մարմնում ի՞նչ է անում, հարա՛մ է, հարա՛մ: Եթե Էրդողանն իրեն տեսներ այդ վիճակում, ի՞նչ կմտածեր՝ Զանգեզուրի միջանցք՝ բիզնիդիր, Մեծ Թուրան՝ նիխտս:

Մոտենում են Ծովագյուղի ձկնորսները եւ փաշա վարչապետին ապրանք առաջարկում: Շփոթահար Իլհամը խալաթի գրպանից ուզում է մի քանի մանաթ հանել, բայց ինչ-որ թղթադրամների կույտ է դուրս բերում, որի վրա Այվազովսկին է պատկերված: Այլայլվում է, բայց ցույց չի տալիս: Մեկնում է քսան հազարանոցը եւ Նիկոլի ծղրտացող ձայնով ասում

-Բա հիմա որսն արգելված չէ՞:

-Արգելված է, վարչապե՛տ ջան, բայց դե նշանակածդ մլիցեքը իմ ու ընկերներիս՝ Վաչիկի, Գարուշի թոռներն են, որ մեզ բռնեն, իրիգունն ի՞նչ են ուտելու:

Իլհամ Նիկոլիչը շփոթահար, կորցնելով հակադարձելու կարողությունը, վերցնում է ձկներով լի տոպրակը եւ շարժվում դեպի ամառանոց: Ձկնագողերը հեռուից ձայն են տալիս. «Վարչապե՞տ, վարչապե՞տ, բա ՀԴՄ-ը կտրո՞նը»: Բայց նա ինքնամոռաց քայլում է՝ վայելելով լուսապայծառ, երանելի առավոտը: Հանկարծ թերակղզու վերեւում տեսնում է մի գողտրիկ եկեղեցի: Որքա՞ն նման է «ավղանական մզկիթի», մտածում է, միայն գմբեթին «ավելորդ խաչ» է:

Նա մի կողմ է շրջում ձկները եւ վազելով բարձրանում դեպի Սեւանավանքի բարձունք: Եկեղեցու մատույցներում ցուցանակի վրա կարդում է, որ այն հիմնադրվել է դեռեւս Գրիգոր Լուսավորչի եւ Տրդատ Մեծ արքայի կողմից 305 թվականին: Քմծիծաղ է տալիս եւ քթի տակ մրթմրթում, թե հայերն ադրբեջանցիներից ավելի ուժեղ երեւակայություն ունեն: Եվ ներքուս դիմում է իր Աստծուն՝ գանգատվելով, թե որքան անարդար է եղել ազերիների նկատմամբ՝ արժանացնելով անդեմ ճակատագրի, երբ հանկարծ մի լուսավոր, բայց չարանենգ միտք է ծագում մեջը. հիմա, երբ Նիկոլ է դարձել, ներսից բոլոր եկեղեցիները կարող է դարձնել մզկիթ, կաթողիկոսին գահընկեց կանի եւ Ալլահի անունից ինքը կդառնա կրոնապետ (Ալլահշուքուր Փաշազադեի ականջը խուլ, ծերուկը համա թե կնախանձի իրեն):

Երազի սառը քրտինքը վաղորդյան եղյամի հետ միասին պատում են Իլհամ Նիկոլիչի ճակատը: Եվ նա հանկարծ սթափվում է. «Ալլա՛հ, էս ի՞նչ

օյին բերեցիր իմ գլխին, բա իմ տեղը ո՞վ է հիմա կառավարում, չլինի՞ Նիկոլը»:

Մաս 2-րդ. Զագուլբայի ապարանքի ննջասենյակի հայելու մեջ խորասուզված եւ ակնածանքով ինքն իրեն զննում է վերջերս ՀՀ վարչապետ, իսկ այժմ՝ երկրի եւ երկնքի տեր, Իլհամի դեմքով Նիկոլայ Վովաեվիչը՝ պարթեւահասակ, վայելչակազմ, հաստաբազուկ, հոլիվուդյան ժպիտով, եվրոպական կրթությամբ եւ «Իրական Ադրբեջանի» գեղագիտական տեսլականով տոգորված: Բեղերն էլ վաս չեն սազում, բայց կարելի է նորից մորուք աճեցնել եւ նմանվել Դոն Քիշոթ Լամանչեցուն, ինքն իրեն մտորում էր պարտվածը՝ հաղթանակած մարմնի մեջ, երբ ներս մտավ նախագահի ադյուտանտ Ահմեդը եւ փոխանցեց օրվա փոստը:

Նիկոլն արդեն դերի մեջ էր. համահրանքով առանձնացրեց ՀՀ կնիքով մի նամակ, որի հեղինակը Հայաստանի վարչապետը, այսինքն՝ «նախկին» ինքն էր.

«Մեծարգո՛ Իլհամ Հեյդարիչ, Արեւմտյան Ադրբեջանի Ձեր առաջ քաշած թեզը, մեղմ ասած, չի բխում հայ ժողովրդի շահերից, բայց ես գրել եմ «Իրական Հայաստանի» գաղափարախոսությունը, որը կդառնա մեր Ցորրորդ Հանրապետության սահմանադրությունը, եթե թույլ տաք... եւ եթե պահպանեք հրադադարը մինչեւ ընտրություններ...», ապա չշարունակելով՝ կատաղած ճմրթեց եւ շրջեց վառվող բուխարու մեջ՝ թուրքերենով ինչ-որ հայհոյանք մռթմռթալով իր՝ թուլակամ վարչապետի հասցեին: Հետո վերցրեց Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից ուղարկված կարմիր մեծ կնիքով գաղտնի ծրարը, որտեղից դուրս բերեց լուսանկարներ, որոնք առնչվում էին Փաշազադեին եւ մերձավոր մոլլաների աշխարհիկ, ոչ պատշաճ արկածներին: Գլուխը տարուբերելով՝ ինքն իրեն ասաց. «Ինչքա՞ն գործ կա այստեղ անելու»:

Նիկոլ Իլհամիչը մոտեցավ չիրկիզվող պահարանին, մի պահ մտածեց եւ հավաքեց հավանական կոդը՝ 09/11/2020#: Ճիշտ էր գուշակել, սեյֆը բացվեց: Այնտեղից գտավ Մեհրիբանի եւ Լուկաշենկոյի, Մեհրիբանի եւ Սահակաշվիլիի հույժ գաղտնի եւ սկանդալային լուսանկարները, վերցրեց եւ դրեց ընդհանուր ծրարի մեջ: «Ժամանակն է»,- ասաց ինքն իրեն: Կանչեց ադյուտանտ Ահմեդին եւ հանձնարարեց «սեռատոչոր» լուսանկարները տարածել «համացանցլարում», անանուն ուղարկել ադրբեջանական բոլոր ՁԼՄ-ներին:

Հանգուցալուծում. Կեսօրին Իլհամ Հեյդարիչը գլխացավով արթնացավ ծանր, սթրեսային քնից: Հայտնաբերեց, որ ինքն ինքն է, իր ռեզիդենցիայում է, իսկ ննջարանում տարածվել է Մեհրիբանի դրած սուրճի անուշ բույրը: Հանկարծ աղմուկ-աղաղակով ներս խուժեցին Ադրբեջանի հատուկ ծառայությունների դիմակավորված աշխատակիցները՝ Փաշազադեի գլխավորությամբ, եւ ձերբակալեցին ապշած Իլհամին:

Ադրբեջանում կրոնական թավշյա հեղափոխություն էր սկսվել:

Իսկ ինչ վերաբերում է «լուսնորդ» Նիկոլ Փաշինյանին, նա դեռ երազի մեջ է եւ պայքարում է Հայ Առաքելական Եկեղեցու եւ հայոց կաթողիկոսի դեմ:

ԱՐԵԳ ՄԱՎՈՒՅԱՆ
25.02.2026թ.

Ռուսաստանի խանութները լցված են հայկական կեղծ կոնյակներո՞վ

«Ռուսաստանի կոնյակի շուկան հեղեղված է կեղծ եւ խարդախված արտադրանքով»,- այդ երկրում Կոնյակ, սոիրս եւ ալկոհոլային արտադրանք թողարկողների միության նախագահ եւ Պետդումայի պատգամավոր **Վլադիսլավ Ռեզնիկի** այս հայտարարությանն են անդրադարձել ռուսական որոշ լրատվամիջոցներ:

Ասվում է, թե Դաշնային մաքսային ծառայության տվյալներով՝ մանրածախ առեւտրում առկա կոնյակի 60-70%-ը կեղծված է: Հայաստանից առեւտրի ցանցեր են հասնում տեխնոլոգիական պահանջների խախտմամբ պատրաստված փոխարինիչներ՝ որակյալ ալկոհոլային խմիչքի արժեքից ցածր գներով:

Ռեզնիկը նշել է, որ իսկական կոնյակի արտադրությունը պահանջում է բարդ եւ երկարատեւ տեխնոլոգիական գործընթաց, որը բացառում է ցածր գնի հնարավորությունը: Անբարեխիղճ վաճառողները, հակառակը, ամեն ինչ անում են արտադրական ծախսերը կրճատելու համար: Ընդսմին, Ռեզնիկի խոսքերով, Հայաստանում բավականաչափ խաղողի այգիներ չկան՝ կոնյակի թորվածքի անհրաժեշտ ծավալներն արտադրելու եւ հայտարարագրված մասակարարման պահանջները բավարարելու համար:

«Հայկական կոնյակը երկար պատմություն ունեցող առանձնահատուկ ապրանքանիշ է, որը ծանոթ է Խորհրդային Միությունում մեծացած յուրաքանչյուրին: Ցավոք, այսօր պետստանդարտի չափանիշներին չհամապատասխանող կեղծված արտադրանքի մատակարարները ակտիվորեն շահագործում են դա... Խաղողը ակնհայտորեն վրացական է, եւ շատ դեպքերում այն «նորացվում» է Հայաստանում եւ ուղարկվում Ռուսաստան որպես ցածրորակ ապրանք»,- ասել է Ռեզնիկը «Ռուս.ռու»-ի թղթակցին:

Անշուշտ սա լուրջ մեղադրանք է՝ ավանդաբար մեր հպարտություններից մեկը համարված հայկական կոնյակի վարկին հարվածող: Պարզվում է՝ այսպիսի մեղադրանք Ռուսաստանից հնչում է ոչ առաջին անգամ եւ նույնիսկ ոչ առաջին տարին: Այդպիսիք եղել են ե՛ւ 2018-ին, ե՛ւ 2024-ին, ե՛ւ անցյալ տարի... Երեւի մնում է պարզել՝ սա սոսկ քաղաքակա՞ն դրդապատճառներով թելադրված հայտարություններից է, որպիսիք սովորաբար պատահում են որեւէ երկրի իշխանությանը «դաս տալու» համար, թե՞ իրականություն է: Առաջին դեպքում, թվում է, անհրաժեշտ է, որ Հայաստանից համապատասխան պաշտոնական պատասխան հնչի: Իսկ եթե ճիշտ է, ակնհայտորեն պետք է լուրջ միջոցներ ձեռք առնվեն՝ մեր փառաբանված ապրանքանիշի վարկի վերջնական անկում թույլ չտալու համար:

Կարծում ենք՝ խոսքը պատկան պետական կառույցներինն է:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակության ԼԵ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն (գովազդ)
հեռ. **010 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 26.02.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: